

ISSN 2738-2737



#1 / Հատոր II  
2022 թ.

# Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես



Armenian Journal of  
Health & Medical Sciences

#1 / Volume II  
2022

[www.ahms.am](http://www.ahms.am)







# Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես

#1 / հատոր II / 2022 թ.

Armenian Journal of  
Health & Medical Sciences

#1/ Volume II / 2022

Армянский журнал  
здравоохранения и медицинских наук

#1 / Том II / 2022

Armenian Journal of Health & Medical Sciences (AJHMS) is the official scientific publication of the Avdalbekyan National Institute of Health of the Ministry of Health, Armenia. The journal is intended for the articles in the field of healthcare, medicine, and other related fields, leading literature reviews, interesting or didactic clinical cases, as well as for special articles on topics relevant to medical sciences and healthcare.

Main goal: to provide high-quality Armenian and foreign scientific content for a wide range of medical fields. The task set is to become the best publishing platform for representing the main events that take place in the field of healthcare and clinical science of Armenia. The articles are accepted both from all relevant institutions and researchers from Armenia and from foreign researchers in the healthcare and medical fields. The submitted articles may be previously published in a different language or presented at a conference in a form of an abstract.

**Main language:** Armenian.

**Language of articles:** Armenian, English, Russian (abstracts must be in all three languages regardless of the main language of the article).

**Publication type:** print and online.

**Annual number of issues:** 2.

**Editing process:** review (one or two reviewers depending on the type of article).

**Peer-review type:** single-blind.

**Audience:** physicians, related specialists, healthcare specialists, as well as researchers working in the fields of medical science, health, psychology, residents, students.

**Official website:** [www.ahms.am](http://www.ahms.am).

**Indexing is not currently applicable.**

#### DIRECTOR OF THE JOURNAL

**Alexander A. Bazarchyan**

#### CO-EDITORS-IN-CHIEF

**Davit O. Abrahamyan**

**Samson G. Khachatryan**

Issue coordinator and proofreader: **Hayk Militonyan**

Designer: **Andrey Astvatsatryan**



#### **Editors\***

Max Aebi (Canada, Switzerland)  
Anastas A. Aghazaryan (Armenia)  
Diana M. Andreasyan (Armenia)  
Hrayr Ts. Aslanyan (Armenia)  
Tigran R. Astvatsatryan (Armenia)  
Hrayr P. Attarian (USA)  
Ruben A. Avdalbekyan (Armenia)  
Khachatur V. Badalyan (Armenia)  
John P. Bilezikian (USA)  
Sharon Chekijian (USA)  
Silva H. Gabrielyan (Armenia)  
Gianluca Gaidano (Italy)  
Sargis F. Ghazaryan (Armenia)  
Naira V. Gogyan (Armenia)  
Yervand K. Hakobyan (Armenia)  
Eduard M. Hambardzumyan (Armenia)  
Samvel G. Hovhannisyanyan (Armenia)  
Argam N. Hovsepyan (Armenia)  
Nerses S. Karamyan (Armenia)  
Hampar Kayayan (France)  
Jean-Jacques Kiladjian (France)

Alina M. Kushkyan (Armenia)  
Rafayel L. Manvelyan (Armenia)  
Arsene Mekinian (France)  
Arthur G. Mkrtychyan (Armenia)  
Lusine K. Muradyan (Armenia)  
Mikael S. Muratoglu (Canada)  
Mihran K. Nazaretyan (Armenia)  
Karen A. Petrosyan (Armenia)  
Hasmik E. Saiyan (Armenia)  
Karine S. Saribekyan (Armenia)  
Sergey G. Sargsyan (Armenia)  
Narina K. Sargsyants (Armenia)  
Mesrop P. Shatakhyan (Armenia)  
Armen F. Soghoyan (Armenia)  
Biayna G. Sukhudyanyan (Armenia)  
Vahe A. Ter-Minasyan (Armenia)  
Hakob V. Topchyan (Armenia)  
Yuri S. Tunyan (Armenia)  
Tigran H. Uzunyan (Canada)  
Artavazd V. Vanyan (Armenia)  
Hayk D. Yenokyan (Armenia)  
Artashes A. Zilfyan (Armenia)

\*The editorial staff is in the formation process

*The copyright of the materials published in the journal belongs to AJHMS and to the authors. For complete or partial reproduction of the materials or for the use in any other form a permission from the Journal's editorial office is required.*

ISSN 2738-2737

© Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես (ԱԲՀՀ), 2022  
© Armenian Journal of Health & Medical Sciences (AJHMS), 2022

Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդեսը (ԱԲՀՀ) ՀՀ ԱՆ ակադ. Ս.Ավդալբեկյանի անվ. Առողջապահության ազգային ինստիտուտի պաշտոնական գիտական հանդեսն է: Այն նախատեսված է առողջապահության, բժշկության և հարակից ոլորտներում անցկացվող գիտական աշխատանքների, առաջատար գրականության ակնարկների, հետաքրքրություն ներկայացնող կամ դիդակտիկ կլինիկական դեպքերի, ինչպես նաև բժշկագիտության և առողջապահության ոլորտներում կարևորություն ունեցող թեմաներով հատուկ հոդվածների համար:

ԱԲՀՀ-ի հիմնական նպատակն է բարձրորակ հայաստանյան և արտասահմանյան գիտական նյութ տրամադրել բժշկական ոլորտի լայն շրջանակների համար: Խնդիր է դրված դառնալ Հայաստանի առողջապահության ոլորտում և կլինիկական գիտության մեջ տեղի ունեցող հիմնական իրադարձությունների ներկայացման համար լավագույն տպագրական հարթակը: Հոդվածներն ընդունվում են թե՛ Հայաստանում գործող բոլոր համապատասխան հաստատությունների և հետազոտողների կողմից, թե՛ արտասահմանյան առողջապահական և բժշկական ոլորտների հետազոտողներից: Ներկայացվող հոդվածները կարող են լինել նախկինում տպագրված այլ լեզվով, կամ գիտաժողովի թեզիսի տեսքով:

Ներկայացվող հոդվածները կարող են լինել նախկինում տպագրված այլ լեզվով, կամ գիտաժողովի թեզիսի տեսքով:

**Հիմնական լեզու՝** հայերեն:

**Հոդվածների լեզու՝** հայերեն, անգլերեն, ռուսերեն (ամփոփագրերը պետք է լինեն բոլոր երեք լեզուներով անկախ հոդվածի հիմնական լեզվից):

**Հրատարակման ձև՝** տպագիր և առցանց:

**Համարների նախատեսված տարեկան քանակ՝ 2:**  
**Խմբագրման գործընթաց՝** գրախոսություն (մեկ-երկու գրախոս՝ կախված հոդվածի տեսակից):

**Գրախոսության (peer-review) ձևաչափ՝** եզակի կոյր:

**Հանդեսի լարան՝** բժիշկներ, հարակից մասնագետներ, առողջապահության կազմակերպիչներ, ինչպես նաև գիտաբժշկական, առողջապահական, հոգեբանական ոլորտներում աշխատանք տանող գիտահետազոտողներ, կլինիկական օրդինատորներ, ուսանողներ:

**Պաշտոնական կայք՝** [www.ahms.am](http://www.ahms.am)

**Ինդեքսավորումը տվյալ պահին կիրառելի չէ:**

## ՀԱՆԴԵՍԻ ՏՆՕՐԵՆ

**Ալեքսանդր Ա. Բազարյան**

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԽՄԲԱԳԻՐՆԵՐ

**Դավիթ Օ. Աբրահամյան**  
**Սամսոն Գ. Խաչատրյան**

Համարի համակարգող և սրբագրիչ՝ **Հայկ Միլիտոնյան**

Ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**



## Խմբագիրներ\*

- Հրայր Պ. Աթաբյան (ԱՄՆ)
- Անաստաս Ա. Աղազարյան (Հայաստան)
- Դիանա Մ. Անդրեասյան (Հայաստան)
- Հրայր Յ. Ասլանյան (Հայաստան)
- Տիգրան Ռ. Աստվածատրյան (Հայաստան)
- Ռուբեն Ա. Ավդալբեկյան (Հայաստան)
- Խաչատուր Վ. Բադալյան (Հայաստան)
- Ջոն Պ. Բիլեգիկյան (ԱՄՆ)
- Սիլվա Հ. Գաբրիելյան (Հայաստան)
- Ջանյուկա Գայդանո (Իտալիա)
- Նաիրա Վ. Գոգյան (Հայաստան)
- Հայկ Դ. Ենոքյան (Հայաստան)
- Արտաշես Ա. Զիլֆյան (Հայաստան)
- Մաքս Էբի (Կանադա, Շվեյցարիա)
- Հակոբ Վ. Թովիցյան (Հայաստան)
- Յուրի Ս. Թունյան (Հայաստան)
- Երվանդ Կ. Հակոբյան (Հայաստան)
- Էդուարդ Մ. Համբարձումյան (Հայաստան)
- Սամվել Գ. Հովհաննիսյան (Հայաստան)
- Արգամ Ն. Հովսեփյան (Հայաստան)
- Սարգիս Ֆ. Ղազարյան (Հայաստան)
- Ռաֆայել Լ. Մանվելյան (Հայաստան)

- Արսեն Մեկինյան (Ֆրանսիա)
- Արթուր Գ. Մկրտչյան (Հայաստան)
- Լուսինե Կ. Մուրադյան (Հայաստան)
- Միքայել Ս. Մուրատով (Կանադա)
- Միհրան Կ. Նազարեթյան (Հայաստան)
- Մեսրոպ Պ. Շատախյան (Հայաստան)
- Շարոն Ճեքիջյան (ԱՄՆ)
- Կարեն Ա. Պետրոսյան (Հայաստան)
- Հասմիկ Ե. Սախյան (Հայաստան)
- Նարինա Կ. Սարգսյան (Հայաստան)
- Սերգեյ Գ. Սարգսյան (Հայաստան)
- Կարինե Ս. Սարիբեկյան (Հայաստան)
- Արմեն Ֆ. Սողոյան (Հայաստան)
- Բիայնա Գ. Սուխույան (Հայաստան)
- Արտավազդ Վ. Վանյան (Հայաստան)
- Վահե Ա. Տեր-Մինասյան (Հայաստան)
- Տիգրան Հ. Ուզունյան (Կանադա)
- Ներսես Ս. Քարամյան (Հայաստան)
- Համբար Բայայան (Ֆրանսիա)
- Ժան-ժակ Քիլաջյան (Ֆրանսիա)
- Ալինա Մ. Քուշկյան (Հայաստան)

\* Խմբագրակազմը գտնվում է ձևավորման փուլում:

*Ամսագրում հրապարակված նյութերի հեղինակային իրավունքները պատկանում են ԱԲՀՀ-ին և հեղինակներին: Նյութերի ամբողջական կամ մասամբ վերահրատարակման կամ որևէ այլ ձևով օգտագործման համար հանդեսի խմբագրության թույլտվությունը պարտադիր է:*

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

EDITORIAL / ОТ РЕДАКЦИИ ..... 8

#### **Monkeypox: a neglected infection becomes re-emerging global challenge**

Narina K. Sargsyants

Կապկի ծաղիկ. անտեսված վարակը դառնում է համաշխարհային մարտահրավեր  
Նարինա Կ. Սարգսյանց

Оспа обезьян: забытая инфекция становится глобальной проблемой

Нарина К. Саргсянц

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

REVIEW ARTICLES/ОБЗОРНЫЕ СТАТЬИ..... 13

#### **Պատվաստանյութի ներարկմամբ պայմանավորված ուսի վնասվածք (ՊՆՊՈՎ). պատվաստում, թե՛ ներարկում. կլինիկական դեպքի նկարագրություն, գրականության ակնարկ և գործնական ուղեցույց** ..... 14

Դավիթ Օ. Աբրահամյան, Սևան Ջ. Իրիցյան

Shoulder Injury Related to Vaccine Administration (SIRVA): vaccination or injection?

Davit O. Abrahamyan, Sevan Z. Iritsyan

Травма плеча, связанная с введением вакцины (SIRVA): вакцинация или инъекция?

Давид О. Абраамян, Севан З. Ирицян

#### **Պահպանված, միջին և իջած արտամղման ֆրակցիայով քրոնիկական սրտային անբավարարության համեմատական կանխատեսումը հիվանդության վարման ժամանակակից մոտեցումների ֆոնին. ժամանակակից գրականության համառոտ ակնարկ** ..... 22

Վազգեն Ա. Քալանթարյան, Համլետ Գ. Հայրապետյան,

Տիգրան Ռ. Աստվածատրյան, Գայանե Հ. Ուստյան

Comparative prognosis of chronic heart failure with preserved, mildly reduced and reduced ejection fraction against the background of contemporary approaches to the treatment of the disease: brief review of modern literature

Vazgen A. Kalantaryan, Hamlet G. Hayrapetyan, Tigran R. Astvatsatryan, Gayane H. Ustyan

Сравнительный прогноз хронической сердечной недостаточности с сохранённой, умеренно сниженной, сниженной фракцией выброса на фоне современных подходов к лечению заболевания: краткий обзор современной литературы

Вазген А. Калантарян, Гамлет Г. Айрапетян, Тигран Р. Аствацатрян, Гаяне Г. Устян

### ՀԱՏՈՒԿ ՀՈԴՎԱԾՆԵՐ

SPECIAL ARTICLES/СПЕЦИАЛЬНЫЕ СТАТЬИ ..... 28

#### **Indications for adjuvant radiotherapy in breast cancer:**

**Armenian consensus 2021-2022** ..... 29

Nerses Karamyan, Vahe Ter-Minasyan

Ադյուվանտ ռադիոթերապիայի ցուցումները կրծքագեղձի քաղցկեղի ժամանակ. 2021–2022թթ. հայկական կոնսենսուսի արդյունքները

Ներսես Քարամյան, Վահե Տեր-Մինասյան

Показания к назначению адъювантной радиотерапии при раке молочной железы: результаты армянского консенсуса 2021-2022гг.

Нерсес Карамян, Ваге Тер-Минасян

**The use of physical models in preventive medicine** ..... 38

Levon A. Tadevosyan,\* Tigran T. Oganessian

Ֆիզիկական մոդելների կիրառումը կանխարգելիչ բժշկության մեջ

Լևոն Ա. Թադևոսյան, Տիգրան Տ. Օգանեսյան

Использование физических моделей в профилактической медицине

Левон А. Тадевосян, Тигран Т. Оганесян

## ՕՐԻԳԻՆԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ

ORIGINAL RESEARCH ARTICLES/ОРИГИНАЛЬНЫЕ НАУЧНЫЕ СТАТЬИ .....43

**A significant interval decline in bone mineral density in osteopenic patients is not part of the FRAX report** .....44

Charles Intenzo, Aishwarya Gulati, Gabriela Bober, Serge Jabbour, Jeffrey Miller, Intekab Ahmed, Kevin Furlong, Sung Kim, Christine Wu, David Capuzzi, John P. Bilezikian

Օստեոպենիկ հիվանդների մոտ ոսկրի հանքային խտության զգալի

միջակայքային նվազումը FRAX զեկույցի մաս չէ

Չարլզ Ինտենցո, Այշվարյա Գուլատի, Գաբրիելա Բոբեր, Սերժ Ջաբբուր, Ջեֆֆրի Միլեր,

Ինտեկաբ Ահմեդ, Քևին Ֆերլոնգ, Սունգ Քիմ, Քրիստին Վու, Դեյվիդ Կապուցի, Ջոն Պ. Բիլեզիկյան

Значительное интервальное снижение минеральной плотности костной ткани

у пациентов с остеопенией не является частью отчета FRAX

Չարլզ Ինտենցո, Այշվարյա Գուլատի, Գաբրիելա Բոբեր, Սերժ Ջաբբուր, Ջեֆֆրի Միլեր,

Ինտեկաբ Ահմեդ, Կևին Ֆերլոնգ, Սունգ Կիմ, Կրիստին Վու, Դեյվիդ Կապուցի, Ջոն Պ. Բիլեզիկյան

**Տարբեր տեղակայման ուռուցքների կրկնակի ճառագայթում. մեկ կլինիկայի փորձը. պրոսպեկտիվ հետազոտության նախնական արդյունքների ամփոփում** .....48

Ներսես Քարամյան, Միքայել Առուստամյան,

Սևանա Աբնուսի, Վահե Տեր-Մինասյան

A single-institution experience on reirradiation of different tumor sites:

preliminary results of the prospective study

Nerses Karamyán, Mikayel Arustamyan, Sevana Abnoosi, Vahe Ter-Minasyan

Опыт отдельной клиники по повторному облучению опухолей различной локализации:

предварительные результаты проспективного исследования

Нерсес Карамян, Микаел Арустамян, Севана Абнуси, Ваге Тер-Минасян

## ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԵՊԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

CLINICAL CASE REPORTS/ОПИСАНИЯ КЛИНИЧЕСКИХ СЛУЧАЕВ.....57

**Generalized myoclonus in two COVID-19 RT-PCR-negative patients with bilateral interstitial pneumonia** .....58

Lusine V. Vardanyan, Samson G. Khachatryan

Գեներալիզացված միոկլոնուս երկկողմանի ինտերստիցիալ թոքաբորբով

երկու COVID-19 ՊՇՌ-բացասական հիվանդների մոտ

Լուսինե Վ. Վարդանյան, Սամսոն Գ. Խաչատրյան

Генерализованный миоклонус у двух пациентов с двусторонней интерстициальной

пневмонией и отрицательными результатами ПЦР теста на COVID-192

Լուսինե Վ. Վարդանյան, Սամսոն Գ. Խաչատրյան

**Хирургическое лечение гепатоцеллюлярного рака у пациента с редкой аномалией развития воротной вены** .....63

Khachatur V. Badalyan, Anzhela A. Tonoyan

Լյարդաբջջային քաղցկեղի վիրահատական բուժումը դոնորակի հազվադեպ

արատով հիվանդի մոտ

Խաչատուր Վ. Բադալյան, Անժելա Ա. Տոնոյան

Surgical treatment of hepatocellular carcinoma in a patient with a rare malformation of the portal vein

Khachatur V. Badalyan, Anzhela A. Tonoyan

## ՀԱՅՈՑ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

ARCHIVES OF ARMENIAN MEDICINE/АРХИВЫ АРМЯНСКОЙ МЕДИЦИНЫ .....69

**Վարակիչ պատվաստվող հիվանդություններ**.....70

Գրիգոր Տեր-Գրիգորյան

Infectious Vaccinable Diseases

Grigor Ter-Grigoryan

Инфекционные вакцинируемые заболевания

Григор Тер-Григорян

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

GUIDE FOR AUTHORS/ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ .....79

# MONKEYPOX



**A neglected  
infection becomes  
re-emerging  
global challenge**

Narina K. Sargsyants

Department of Infectious Diseases, Avdalbekyan National Institute of Health, Yerevan, Armenia

Ministry of Health, Yerevan, Armenia

National Center for Infectious Diseases, Yerevan, Armenia

Monkeypox (MPX) was first discovered in 1958 when two outbreaks of a pox-like disease occurred in colonies of monkeys kept for research. Despite being named “monkeypox”, the source of the disease is still unknown. However, African rodents and some primates may harbor the virus and infect people. In humans, the first case was described in 1970 in a 9-year-old child in the Democratic Republic of the Congo (DRC), nine months after the eradication of smallpox in that country. This was followed by sporadic cases reported from the rain-forest areas of central and western Africa. The outbreaks were enrolled mainly in the DRC, where the disease is currently considered endemic. Outside Africa, the first MPX outbreak with 81 human cases was reported in the United States (US) in 2003 af-

ter close contact with predominantly prairie dogs. In September 2018, three individual patients in the United Kingdom (UK) were diagnosed with MPX; two had recently travelled to Nigeria, and the third case was a healthcare worker caring for one of the cases. In 2018-2019 in Israel, Singapore and UK the sporadic cases of imported MPX from Nigeria reported [1,2].

In May 2022, a family cluster of two non-travel related cases and several cases in men who have sex with men (MSM) were registered in the UK. Subsequently, the same situation was reported in Portugal, Spain, Belgium, Germany, France, Italy, Sweden, Switzerland, the Netherlands, Austria, Slovenia, Finland, Malta, Norway, Hungary, Canada, the US, Australia, Israel, the United Arab Emir-



ates etc., with the latest update also in Georgia and Turkey [1-3].

The causative agent is the monkeypox virus (MPXV), which belongs to the genus Orthopoxvirus, family Poxviridae [1,2,4]. The Orthopoxvirus genus also includes variola virus (etiological agent of smallpox), vaccinia virus (used in the smallpox vaccine), and cowpox virus. At the same time, despite similarities of the clinical course of the disease, MPX is not related to chickenpox (the causative agent is varicella zoster virus) [1,2].

Poxviruses show extraordinary resistance to drying [5], and increased temperature and pH tolerance when compared with other enveloped viruses. Despite these characteristics, poxviruses are sensitive to common disinfectants, although they can be less sensitive to organic disinfectants compared to other enveloped viruses [1].

MPXV is not considered a biological agent of concern for biosecurity according to the US Centers for Disease Control and Prevention's (CDC) list of bioterrorism agents [6], but it is considered an 'agent with high threat for deliberate release' using the matrix developed by the European Union (EU) task force on Bioterrorism (BICHAT) [1].

Two phylogenetically distinct clades of MPXV have been identified through genomic sequencing: the Central African (Congo Basin) clade (CAC) and the West African clade (WAC). Since 2016, confirmed MPX cases have been reported from the following African countries: Cameroon (WAC), Central African Republic (CAC), the DRC (CAC), Liberia (WAC), Nigeria (WAC), the Republic of the Congo (CAC) and Sierra Leone (WAC). Genetic differences between the viral genomes of the two clades might explain differences in viral clearance and pathogenesis [1]. Typically, the CAC MPXV is associated with more severe disease, higher mortality, and more frequent human-to-human transmission [4,7].

Human-to-human transmission of MPXV was considered to mostly occur through respiratory droplets during close and prolonged face-to-face contact, by direct contact with body fluids of an infected person, or contact with contaminated objects, such as bedding or clothing [2,3,8]. Previously, small clusters in Nigeria among heterosexual partners indicate that transmission through sexual contact is a plausible route of transmission. Other rare transmission routes, such as mother-to-child transmission [14] or nosocomial infection [15,16] have been documented. Based on outbreak data in May 2022, when most cases were found among MSM, sexual transmission is hypothesized to be the

main driver of ongoing outbreaks. It is unknown whether and how the risk of transmission varies with the type of sexual contact and exposure (e.g. non-penetrative, penetrative vaginal, penetrative anal, use of preservatives) [1].

Difference in country-by-country approaches concerning case definitions, detection, testing, and reporting strategies affect the actual number of infected individuals, with varying underestimates of the true number of cases and deaths. According to the World Health Organization (WHO) strategy through International Health Regulations (2005) communications, countries should notify only probable and confirmed cases. At the same time, all suspected cases are required to be reported to national authorities [3]. Existing data from polymerase chain reaction (PCR) assays and genome sequencing indicate that the MPXV genomes belong to the West African clade [2].

On 8 August 2022, the WHO released an updated report on the multi-country outbreak of MPX. From 1 January through 7 August 2022, 27814 laboratory-confirmed cases of MPX and 11 deaths have been reported to WHO from 89 countries/territories/areas in all six WHO Regions. The majority of cases reported in the past four weeks were notified from the WHO European region (53%) followed by the Region of the Americas (46%). Since the last edition of this report published on 25 July 2022, 11798 new cases (74% increase), and 14 new countries have reported cases. Six new deaths have been reported. In the contrary to the July of 2022, then three deaths have been reported in Africa, for the first time MPX deaths have been reported in countries outside of the Africa in Spain (two deaths), Brazil (one death), and India (one death). In two cases, deaths have been linked to viral encephalitis and some patients had underlying immune compromising conditions [17].

Besides, a group of global experts convened by WHO has agreed on new names for MPXV variants, as part of ongoing efforts to align the names of the monkeypox disease, virus and variants – or clades – with current best practices. The global health agency labeled Monkeypox variations as Clades I, IIa and IIb. The Congo Basin and West African variants were reclassified as Clade I and Clade II, the latter of which has two subclades [17].

According to the last report (16 August 2022) from European Center for Disease Prevention and Control (ECDC) and the WHO Regional Office for Europe, already 19429 cases of MPX have been identified through International Health Regulations

(IHR) mechanisms from 43 countries the European region. A total of 18960 cases were reported in the European Surveillance System (TESSy) from 36 countries, among them 18847 cases were laboratory-confirmed. Vast majority of cases were reported in male (98.9%). Among cases with known HIV status, 38% were HIV-positive. The commonest symptom was rash (77.1%) and systemic symptoms such as fever, fatigue, muscle pain, vomiting, diarrhea, chills, sore throat or headache (65%). Only 5.8% of patients were hospitalized. 1.7% of cases were reported in Health Care Workers (HCW); importantly no occupational exposure has been reported. The earliest known case by retrospective analyses of a residual sample was identified on 07 March 2022 and the earliest date of symptomatic disease was reported as 03 April 2022. Summary of reported sexual orientations according to TESSy data is as follows: 49.5% self-identified as MSM, 0.5% Bisexual, 0.9% Heterosexual [18].

The current outbreak of MPX is also characterized by atypical clinical manifestations. Previously described classical clinical presentation of MPX, such as fever, swollen lymph nodes, followed by centrifugal rash, is not common for the 2022 outbreak. Typically, the majority of human MPX cases experiences mild to moderate symptoms. The severity of disease varies depending on the transmission route, host susceptibility, and the quantity of virus inoculated, with invasive modes of exposure causing more severe disease and a shorter incubation period [9].

Usually, the incubation period for MPX is 6 to 13 days, but can range from 5 to 21 days. Human MPX often begins with a combination of the following symptoms: fever, headache, chills, exhaustion, asthenia, lymph node swelling, back pain, and muscle aches. Commonly, within three days of the onset of these prodromal symptoms, a centrifugal maculopapular rash starts at the site of the primary infection and rapidly spreads to other parts of the body. Rash dissemination with palms and soles involvement is characteristic of MPX. The lesions progress, usually within 12 days, simultaneously from the stage of macules to papules, vesicles, pustules, crusts, and scabs (monomorphism). This is different in chickenpox (varicella), where progression of exanthema is more varied with simultaneous presence of different stage of rash elements (false polymorphism). The lesions may be centrally depressed and can be extremely itchy, and secondary bacterial infection may occur if scratching occurs. Lesions on oral or ophthalmic mucosa (enanthema) may also be present. Prior to and concomitant with

the rash, lymphadenopathy is observed in many patients [8].

However, in the 2022 outbreaks, many cases presented with rashes in the anogenital region. The number of lesions may range from a few to thousands. According to the WHO update report, 81% had a widespread body rash, 50% were febrile and 41% presented with genital rash. For most affected people, MPX is a self-limited disease, typically lasting two to four weeks and ending in full recovery [1,8].

Complications in endemic countries include encephalitis, secondary skin bacterial infections, dehydration, conjunctivitis, keratitis, and pneumonia. The case fatality rate (CFR) of MPX ranges from 0% to 11% in outbreaks in endemic areas, with mortality mostly affecting young children [8]. Immunocompromised individuals are especially at risk of severe disease [10]. In the outbreak in Nigeria in 2017, patients with concurrent HIV infection had more severe morbidity with more skin lesions and associated genital ulcers compared to HIV-negative individuals. No deaths were reported among HIV-positive patients [11]. In Nigeria, between September 2017 and 5 June 2022, 257 confirmed cases were identified, including nine deaths (CFR = 3.5%), at least five of which were immunosuppressed [12,13]. Major disease sequelae are usually disfiguring scars and permanent corneal lesions.

Any individual meeting the clinical definition for a suspected case should be offered testing. Additionally, risk factors for infection, such as being a gay, bisexual and other MSM, reporting a high number of sexual partners in the prior three weeks, and having attended a gathering where a confirmed case was reported can be suggestive of the need to test for MPXV [3].

The primary diagnostic test for MPX diagnosis is PCR of the skin lesion material. In addition, other specimens such as an oral, nasopharyngeal or rectal swab may also be collected, as appropriate [1-3].

Clinical management of patients with suspected or confirmed MPX requires early recognition through screening protocols adapted to local settings, prompt isolation and rapid implementation of appropriate infection prevention and control (IPC) measures, testing to confirm diagnosis, symptomatic management of patients with mild or uncomplicated MPX, and monitoring and treatment of complications and life-threatening conditions, such as progression of skin lesions, secondary bacterial infection of skin lesions, ocular lesions, and rarely, severe dehydration, severe pneumonia or sepsis [3].

---

Patients with mild or uncomplicated MPX who are isolated at home require careful assessment of the ability to safely isolate and maintain required IPC precautions in their home to prevent transmission to other household members, and have access to care if the condition progresses or worsens. Precautions should remain in place until lesions have crusted, scabs have fallen off and a fresh layer of skin has formed underneath [1].

Current treatment of MPX is symptomatic (alleviation of fever and pruritus, hydration), including prevention and treatment of secondary bacterial infections. Few antiviral drugs, such as tecovirimat, brincidofovir and cidofovir are potential options for severe cases [19]. Only tecovirimat has market authorization in the EU for the treatment of orthopoxvirus infection, including MPX. Limited data on efficacy and safety exist currently, while clinical studies are ongoing in Africa [20].

Previous vaccination against smallpox can confer cross-protection against MPX, which was estimated from older studies to be as high as 85% [2]. The protective effect of smallpox vaccination can last more than 20 years. However, despite the waning effect smallpox vaccine confers, it is believed that memory B and T cells can provide lifelong protection against severe disease, therefore some degree of protection should be expected in the adult population in the EU/EEA who is currently over 50 years [21]. During the 2022 outbreak, some countries made vaccination recommendations [1]. Early post-exposure vaccination (within four days of exposure to a MPX case) with smallpox vaccine (off-label use) may prevent the disease or make its course less severe [18].

In conclusion, the emergence of new zoonoses and their potential spread at the global level is something we need to be prepared for. In the face of deforestation, migration and conflict, contact between human populations and wildlife is becoming more common, and such proximity will favor spill-

over of zoonotic pathogens [4].

Whereas during the ongoing multi-country outbreak of MPX, sexual contact was identified as the most commonly suspected and reported route of transmission, the sensitivity in reporting a full list of sexual contacts made it challenging to break all chains of transmission. At this stage, WHO recommends that all known contacts or individuals who believe they may have been exposed monitor their symptoms for 21 days from the last known or suspected contact with a case. Testing and quarantine are required for persons with clinical manifestation of MPX. In the absence of symptoms among contacted, they are recommended to [3]:

- ▶ follow hand hygiene
- ▶ rigorously practice respiratory etiquette
- ▶ avoid contact with children or immunocompromised individuals or pregnant women
- ▶ avoid any form of sexual contact for 21 days
- ▶ avoid non-essential travel.

The HCWs should apply standard precautions and perform a risk assessment to evaluate the need to use transmission-based precautions. Standard precautions include: hand and respiratory hygiene, personal protective equipment, aseptic technique, safe injections and sharps injury prevention, environmental cleaning and disinfection, proper handling of laundry and linen, decontamination and reprocessing or reusable patient care items and equipment, and waste management, and should be used for all patients at all times [3].

Pre-exposure or post-exposure prophylaxis by using smallpox or monkeypox vaccines should rely on clinical decision-making between health care provider and prospective vaccinee, based on a joint assessment of risks and benefits, on a case-by-case basis.

What is currently missing is knowledge of what pathogens might emerge and an adequate investment in surveillance [4].

## REFERENCES

1. Factsheet for health professionals on monkeypox, European Centre for Disease Prevention and Control, 14 June 2022
2. Centers for Disease Control and Prevention, National Center for Emerging and Zoonotic Infectious Diseases (NCEZID), Division of High-Consequence Pathogens and Pathology (DHCPP), 17 June 2022
3. Multi-country outbreak of monkeypox. WHO External Situation Report 1, published 6 July 2022
4. The Lancet Infectious Diseases. Monkeypox: a neglected old foe. *Lancet Infect Dis.* 2022;22(7):913
5. Rheinbaben F, Gebel J, Exner M, Schmidt A. Environmental resistance, disinfection, and sterilization of poxviruses. *Poxviruses*. Basel: Springer; 2007. p. 397-405
6. Centers for Disease Control and Prevention (CDC). Bioterrorism Agents/Diseases Atlanta: CDC; 2018. Available from: <https://emergency.cdc.gov/agent/agentlist-category.asp>
7. World Health Organization. Monkeypox [Internet]. Geneva: WHO; 2022 [updated 19 May 2022]. Available from: <https://www.who.int/en/news-room/fact-sheets/detail/monkeypox>
8. Reynolds MG, Yorita KL, Kuehnert MJ et al. Clinical manifestations of human monkeypox influenced by route of infection. *J Infect Dis.* 2006;194(6):773-80
9. Petersen E, Kantele A, Koopmans M et al. Human monkeypox: epidemiologic and clinical characteristics, diagnosis, and prevention. *Infect Dis Clin North Am.* 2019;33(4):1027-1043
10. Ogoina D, Izibewule JH, Ogunleye A et al. The 2017 human monkeypox outbreak in Nigeria—report of outbreak experience and response in the Niger Delta University Teaching Hospital, Bayelsa State, Nigeria. *PLoS One.* 2019;14(4):e0214229
11. Nigeria Centre For Disease Control (NCDC). Update on monkeypox (MPX) in Nigeria. Jabi Abuja: Nigeria Centre for Disease Control (NCDC), 2022 05 June 2022. Report No 12.
12. Nigeria Centre For Disease Control (NCDC). Monkeypox outbreak in Nigeria. Jabi Abuja: 2018. 25 February 2018. Report No.
13. Mbala PK, Huggins JW, Riu-Rovira T et al. Maternal and fetal outcomes among pregnant women with human monkeypox infection in the Democratic Republic of Congo. *J Infect Dis.* 2017;216(7):824-8
14. Learned LA, Reynolds MG, Wassa DW et al. Extended interhuman transmission of monkeypox in a hospital community in the Republic of the Congo, 2003. *Am J Trop Med Hyg.* 2005;73(2):428-34
15. McCollum AM, Damon IK. Human monkeypox. *Clin Infect Dis.* 2014;58(2):260-7
16. Public Health England. Cases of monkeypox confirmed in England [Internet] [updated 5 December 2018]. Available from: <https://www.gov.uk/government/news/monkeypox-case-in-england>
17. Multi-country outbreak of monkeypox External Situation Report 3, published 10 August 2022 <https://www.who.int/publications/m/item/multi-country-outbreak-of-monkeypox--external-situation-report--3---10-august-2022>
18. Joint ECDC-WHO Regional Office for Europe Monkeypox Surveillance Bulletin 17 August 2022 [https://cdn.who.int/media/docs/librariesprovider2/monkeypox/monkeypox\\_euro\\_ecdc\\_draft\\_jointreport\\_2022-08-17.pdf?sfvrsn=34c4f52a\\_3&download=true](https://cdn.who.int/media/docs/librariesprovider2/monkeypox/monkeypox_euro_ecdc_draft_jointreport_2022-08-17.pdf?sfvrsn=34c4f52a_3&download=true)
19. Centers for Disease Control and Prevention (CDC). Monkeypox - Treatment Atlanta: CDC; 2021. Available from: <http://www.cdc.gov/poxvirus/monkeypox/treatment.html>.
20. European Medicines Agency (EMA). Tecovirimat SIGA Amsterdam: EMA; 2022. Available from: <https://www.ema.europa.eu/en/medicines/human/EPAR/tecovirimat-siga>
21. Kunasekaran MP, Chen X, Costantino V et al. Evidence for residual immunity to smallpox after vaccination and implications for re-emergence. *Mil Med.* 2019;184(11-12):e668-e79

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

**REVIEW ARTICLES**  
**ОБЗОРНЫЕ СТАТЬИ**

# Պատվաստանյութի ներարկմամբ պայմանավորված ուսի վնասվածք (ՊՆՊՈՎ). պատվաստում, թե՛ ներարկում

## Կլինիկական դեպքի նկարագրություն, գրականության ակնարկ և գործնական ուղեցույց

Դավիթ Օ. Աբրահամյան,<sup>1,\*</sup> Սևան Զ. Իրիցյան<sup>2</sup>

<sup>1</sup>Պլաստիկ և վերակառուցողական վիրաբուժության ամբիոն, ՀՀ ԱՆ Ակադ. Ս.Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

<sup>2</sup>Արյունաբանության և տրանսֆուզիոն բժշկության ամբիոն, ՀՀ ԱՆ Ակադ. Ս.Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատվաստանյութի ներարկմամբ պայմանավորված ուսի վնասվածքը (ՊՆՊՈՎ, SIRVA) կանխելի երևույթ է, որը հիմնականում առաջանում է պատվաստանյութի ներարկման տեխնիկայի խախտման արդյունքում: Դա հաճախ հանգեցնում է ուսահողի կառույցների բորբոքման, ինչն ուղեկցվում է ուսի ցավով, շարժումների սահմանափակմամբ և կյանքի որակի անկմամբ: Սույն կլինիկական դեպքի նկարագրության և գրականության ակնարկի նպատակն է բարձրացնել բուժաշխատողների իրազեկվածությունը:

Նր ՊՆՊՈՎ-ի մասին: Տարբեր դեղամիջոցների ներարկման հետ կապված կողմնակի երևույթները և, մասնավորապես, ՊՆՊՈՎ-ը կարելի է կանխարգելել՝ թարմացնելով ներարկող/պատվաստող բուժանձնակազմի գիտելիքները և կիրառելով տեղանշման ու ներարկման պատշաճ տեխնիկա: Բացի այդ, բուժաշխատողների իրազեկումը կօգնի վաղաժամ հայտնաբերել ՊՆՊՈՎ-ով հիվանդներին՝ նրանց ցուցաբերելով համապատասխան բուժում:

*Հիմնաբառեր. պատվաստում, ներարկում, ուսի վնասվածք, ՊՆՊՈՎ, պատվաստանյութ*

### ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԵՊԶ

58-ամյա մի կին, զարկերակային գերճնշման անամնեզով, ով նախկինում ուսի ցավ չի ունեցել, ստացել է Սպուտնիկ V պատվաստանյութի իր առաջին չափաբաժինը 2021թ. դեկտեմբերին, որն անցել է առանց կողմնակի երևույթների: 1 ամիս անց երկրորդ չափաբաժինը նույն (ձախ) ուսին ստանալիս նկատել է, որ ներարկման ժամանակ ասեղը նախկին ներարկման տեղից կարծես մի փոքր վեր է եղել: Երկրորդ ներարկումից հետո, երկրորդ օրն ի հայտ է եկել այդ ուսահողի սաստիկ ցավ (հիվանդի սուբյեկտիվ գնահատմամբ՝ 0-10 սանդղակով 8 միավոր), որը ճառա-

գայթել է դեպի արմունկ և ուղեկցվել ուսահողի շարժումների սահմանափակմամբ: Դիմել է նյարդաբանի, որի նշանակած բուժման ֆոնին (լորնօքսիկամ 8մգ, օրական 1 անգամ մ/մ, մելդրոնիում 10% 5մլ, օրական 1 անգամ մ/մ) հիվանդը նկատել է ցավերի որոշակի, բայց անբավարար թեթևացում, սակայն շարժումների սահմանափակումը մնացել է անփոփոխ: 2 շաբաթ անց կատարված ուսահողերի ուլտրաձայնային հետազոտությունը (ՈւՁՀ) երկկողմանի տարիքային փոփոխություններին զուգահեռ հայտնաբերել է ձախակողմյան ենթաուսելյունային պարկաբորբ (սուբակրոմիալ բուրսիտ): Դիմել է ձեռքի վիրաբույժի, որը նշանակել է ներքին ընդունման ոչ ստե-

\*Կոնտակտային հեղինակ. էլ-փոստ. davplast@gmail.com, հեռ. +37493838636: DOI:10.54235/27382737-2022.v2.1-14. Published online: 5 September 2022

րոհիդային հակաբորբոքային դեղամիջոց (տենոքսիկամ 20մգ, օրական 1 հաբ, 10 օր) և կինեզիթերապիա՝ ուսահողի շարժումները բարելավող վարժություններ: 10-օրյա բուժման ֆոնին ցավերը նվազել են՝ դառնալով 3/10 միավոր, ինչպես նաև մասամբ վերականգնվել է ուսահողի շարժումների ծավալը:

### ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՆԵՐԱՐԿՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՌԻՍԻ ՎՆԱՍՎԱԾՔ

Պատվաստանյութի ներարկմամբ պայմանավորված ուսի վնասվածք (ՊՆՊՈՎ) կամ անզվերեն՝ Shoulder Injury Related to Vaccine Administration (SIRVA) եզրույթն առաջին անգամ կիրառվել է 2010թ. Պատվաստանյութային վնասվածքների փոխհատուցման ԱՄՆ ազգային ծրագրի (VICP) բժիշկների խմբի կողմից: Նրանք հաղորդել էին 13 անձանց մասին, ովքեր ներկայացել էին դելտայաձև մկանի շրջանում պատվաստանյութի ներարկումից հետո ի հայտ եկած ուժեղ ուսացավով, որը շարունակվել էր ավելի քան 6 ամիս [1]: Հետագայում՝ 2015թ., VICP-ը առաջարկեց ՊՆՊՈՎ-ը ներառել որպես իմունիզացիայի բարդություն Պատվաստանյութային վնասվածքների աղյուսակում, ինչը հաստատվեց 2017թ. [2]: Ըստ VICP-ի սահմանման՝ ՊՆՊՈՎ-ն իրենից ներկայացնում է ուսի ցավ և շարժումների սահմանափակում պատվաստանյութը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում այն անձանց մոտ, ովքեր անամնեզում ուսահողերի ցավ, բորբոքում կամ դիսֆունկցիա չեն ունեցել [3]: ՊՆՊՈՎ-ն անբարեհաջող (անցանկալի) հետպատվաստումային երևույթ է, որը, ենթադրաբար, կապված է դելտայաձև մկանի մեջ ներարկման տեխնիկայի խախտման հետ, ինչը հանգեցնում է ասեղով հյուսվածքների/կառույցների ուղղակի վնասման և/կամ պատվաստանյութի չկանխամտածված ներմուծման դելտայաձև մկանի վրա (ենթամաշկային ճարպաբջջանք) կամ դրա տակ գտնվող հյուսվածքների ու կառույցների մեջ [4]: Այլ կերպ ասած՝ ՊՆՊՈՎ-ը մեծ հաշվով կարելի է դասել «յարթոգեն վնասվածքների» շարքին:

Սույն աշխատանքի նպատակն է բարձրացնել առողջապահական համակարգի աշխատակիցների իրազեկվածությունը ՊՆՊՈՎ-ի վերաբերյալ:

### ՊԱՏՃԱՌՆԵՐ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ

ՊՆՊՈՎ-ի էթիոպաթոգենեզը լիովին պարզաբանված չէ: Զուտ մեխանիստական տեսանկյունից՝ առաջնային պատճառ կարող է հանդիսանալ ասեղի սխալ ընտրված երկարությունը

կամ ներարկման ոչ պատշաճ, անփույթ տեխնիկան, ինչի հետևանքով ասեղը կամ չի հասնում դելտայաձև մկանին կամ էլ անցնում է դրա տակ գտնվող հյուսվածքներ և պարզապես վնասում այդտեղ գտնվող կառույցները (ծուսպապարկ, ջիլ, կապան և այլն) [5,6]: Դրան գումարվում է կենսաբանորեն ակտիվ նյութ հանդիսացող պատվաստանյութի հրահրած իմունաբորբոքային ռեակցիան, որը նորմալում, դելտայաձև մկանի մեջ հայտնվելով, նմանատիպ բուռն ռեակցիա չէր հարուցի: Արդյունքում զարգացող բարդությունները կարելի է բաժանել 3 խմբի. մաշկային, ոսկրամկանային և նյարդային [7]:

Առաջին սցենարի դեպքում, երբ ասեղը համեմատաբար կարճ է լինում (օրինակ, հաստ ճարպաշերտով մարդկանց մոտ կամ երբ ներարկողն ի սկզբանե շատ կարճ ասեղ է ընտրում կամ էլ ասեղը ներարկման տեղին ուղղահայաց չի խրում), դեղամիջոցը ներարկվում է ենթամաշկի մեջ և զարգանում են մաշկային բարդություններ: Դրանք կարող են արտահայտվել մաշկային բորբոքային ռեակցիաների (ենթամաշկային հանգուցիկ, տեղային լիպոատրոֆիա, ասեպտիկ աբսցես), ինֆեկցիոն երևույթների (ցելյուլիտ, թարախակույտ, պիոմիոզիտ, ինֆեկցիոն ենթամաշկային էմֆիզեմա) կամ մաշկի ասեպտիկ մեռուկացման (մաշկի դեղորայքային էմբոլիա՝ Նիկոլաուի համախտանիշ) տեսքով [8]: Ինֆեկցիոն երևույթներ կարող են զարգանալ նաև ներարկման տեղը չվարակազերծելու կամ ոչ պատշաճ կերպով վարակազերծելու հետևանքով: Այս մաշկաբանական երևույթները, թեև կարող են ուղեկցվել ուսի շրջանի ցավերով, սակայն ՊՆՊՈՎ-ին չեն դասվում, քանի որ ուսահողի շարժումների սահմանափակում առանձնապես կամ ընդհանրապես չեն առաջացնում (տե՛ս ՊՆՊՈՎ-ի սահմանումը):

ՊՆՊՈՎ զարգանում է հիմնականում երկրորդ սցենարի դեպքում, երբ ասեղը համեմատաբար երկար է լինում, օրինակ՝ նիհար մարդկանց, հատկապես կանանց և տարեցների մոտ, ում դելտայաձև մկանը թույլ է զարգացած [9] կամ երբ ասեղն ի սկզբանե շատ երկար է ընտրվում կամ շատ խորն է ներմուծվում կամ էլ նախատեսվող տեղից շատ ցածր (բազկոսկրի վերնոսկրի կամ ճաճանչային նյարդի վնասումով) կամ շատ բարձր (անմիջապես ենթաուսելունային ծուսպապարկի կամ ուսի հողապարկի մեջ): Արդյունքում կարող են զարգանալ ոսկրամկանային (ոսկրային, հողային վնասում, ենթադելտայաձևային կամ ենթաուսելունային պարկաբորբ՝ սուբդելտոիդ կամ սուբակրոմիալ բուրսիտ, ինչպես նաև պտտական մանժետի ջլախտ կամ ջլաբորբ և/կամ ուսահողի պատիճաբորբ՝

սառած ուսի համախտանիշի պատկերով) [10-14] կամ, ավելի հազվադեպ, նյարդային (անութափոսային նյարդի առաջային ճյուղի կամ ճաճանջային նյարդի կաթված) բարդություններ: Լինում են նաև դեպքեր, երբ ասեղը վնասում է մկանի մեջ գտնվող որևէ անոթ, ինչի հետևանքով զարգանում է ներմկանային հեմատոմա [8]: Հենց այս ոսկրամկանային ու նյարդային բարդությունների համախումբը, որն արտահայտվում է ուսահողի շարժումների սահմանափակմամբ ուղեկցվող սուր ցավերով, կազմում է ՊՆՊՈՎ-ը:

Դելտայաձև մկանի շրջանում պատվաստանյութի ներարկման ոչ պատշաճ կամ անփույթ տեխնիկայի հնարավոր պատճառները, զարգացման մեխանիզմները, դիսկի գործոններն ու բարդությունները, այդ թվում՝ ՊՆՊՈՎ-ը, ամփոփված են Աղյուսակ 1-ում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ չնայած մի քանի դիտողական ուսումնասիրությունների ենթադրյալ փոխադարձ կապերին, հատուկ էթոլոգիական և դիսկի գործոնների ու ՊՆՊՈՎ-ի միջև պատճառահետևանքային կապերը վերջնականապես հաստատելու համար դեռևս անհրաժեշտ են ավելի մասշտաբային, բարձրորակ հետազոտություններ [15]:

**ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, ԱՍՏՈՐՈՇՈՒՄ, ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԱՍՏՈՐՈՇՈՒՄ**

Ինչպես նշվեց սկզբում, ՊՆՊՈՎ-ը կլինիկորեն արտահայտվում է ուսի ցավերով և ուսահողի շարժումների տիրույթի սահմանափակմամբ, որոնք ծագում են այդ ուսի շրջանում պատվաստանյութի ներարկումից հետո 48 ժամվա ընթացքում և չեն անհետանում 1 շաբաթվա ընթացքում:

**Աղյուսակ 1.** Դելտայաձև մկանի շրջանում պատվաստանյութի ներարկման բարդություններ

Ռիսկի գործոններ		Բարդություններ		
		Մաշկային	ՊՆՊՈՎ	Նյարդային
			Ոսկրամկանային	
Ասեպտիկայի, անտիսեպտիկայի կանոնների խախտում	<ul style="list-style-type: none"> <li>▶ Աղտոտված ասեղ</li> <li>▶ Ներարկման տեղի չվարակազերծելը</li> <li>▶ Ներարկման տեղի ոչ պատշաճ կերպով վարակազերծելը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▶ <b>Ինֆեկցիոն.</b> <ul style="list-style-type: none"> <li>▶ ցելյուլիտ</li> <li>▶ թարախակույտ</li> <li>▶ ինֆեկցիոն ենթամաշկային էմֆիզեմա</li> </ul> </li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▶ Պիոմիոզիտ</li> <li>▶ Սեպտիկ հոդաբորբ</li> </ul>	-
Ասեղի բացարձակ կամ հարաբերական կարճ լինելը	<ul style="list-style-type: none"> <li>▶ Հաստ ճարպաշերտ</li> <li>▶ Կարճ ասեղ</li> <li>▶ Ասեղի խրում սուր անկյան տակ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▶ <b>Բորբոքային.</b> <ul style="list-style-type: none"> <li>▶ ենթամաշկային հանգուցիկ</li> <li>▶ տեղային լիպոատրոֆիա</li> <li>▶ ասեպտիկ արքցես</li> </ul> </li> <li>▶ Մաշկի ասեպտիկ մեռուկացում՝ մաշկի դեղորայքային էմբոլիա (Նիկոլաուի համախտանիշ)</li> </ul>	-	-
Ասեղի բացարձակ կամ հարաբերական երկար լինելը	<ul style="list-style-type: none"> <li>▶ Բարակ ճարպաշերտ<sup>1</sup></li> <li>▶ Հիպոտրոֆիկ դելտայաձև մկան<sup>2</sup></li> <li>▶ Երկար ասեղ</li> <li>▶ Շատ խորը ներարկում</li> <li>▶ Նախատեսվող տեղից շատ բարձր ներարկում</li> <li>▶ Նախատեսվող տեղից շատ ցածր ներարկում</li> </ul>	-	<ul style="list-style-type: none"> <li>▶ Ենթադելտայաձևային պարկաբորբ<sup>3</sup></li> <li>▶ Ենթատեսլունային պարկաբորբ<sup>4</sup></li> <li>▶ Ուսահողի պատիճաբորբ<sup>5</sup></li> <li>▶ Պոտական մանժետի ջլախտ/ջլաբորբ<sup>6</sup></li> <li>▶ Ոսկրային էրոզիա</li> <li>▶ Բազկոսկրի գլխիկի օստեոնեկրոզ</li> <li>▶ Պրոգրեսիվ խոնդրոլիզ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▶ Անութափոսային նյարդի առաջային ճյուղի կաթված</li> <li>▶ Ճաճանջային նյարդի կաթված</li> </ul>

<sup>1</sup> Հատկապես նիհար կանանց մոտ  
<sup>2</sup> Հատկապես կանանց և տարեցների մոտ  
<sup>3</sup> Սուբդելտոիդ բուրսիտ  
<sup>4</sup> Սուբակրոմիալ բուրսիտ  
<sup>5</sup> Ադիեզիվ կապսուլիտ  
<sup>6</sup> Տենդինոպաթիա/տենդինիտ  
 ՊՆՊՈՎ – պատվաստանյութի ներարկմամբ պայմանավորված ուսի վնասվածք



քում [15]: Ընդ որում, հիվանդները երբեմն նշում են, որ ըստ իրենց «սրկումը կարծես այն չէր, դժվար ընթացավ», «թվում էր, թե բուժքույրը պատվաստանյութը շատ բարձր տեղից ներարկեց», «պատվաստողը կանգնած ու անհարմար դիրքից էր ներարկում» [1,9,16]:

ՊՆՊՈՒՎ-ի պաթոգենոնիկ ախտանշանը նախկինում ասիմպտոմատիկ ուսի սաստիկ ցավն է, որն առաջանում է պատվաստումից հետո 1-2 օրվա ընթացքում և սովորական, առանց դեղատոմսի տրվող ցավազրկողներով չի անցնում [5]: Սակայն հիվանդները, որպես կանոն, դիմում են բժշկի ավելի ուշ՝ մոտ 2 շաբաթ [9], իսկ որոշ դեպքերում նույնիսկ ամիսներ անց [5]: Ուսացավը՝ օմալգիան, կարող է տևել շաբաթներ և նույնիսկ ամիսներ [16]: Բնորոշ ախտանշան է նաև ուսահողի, իսկ երբեմն նաև ամբողջ վերջույթի շարժումների ծավալի սահմանափակումը: Այս երկու ախտանշանները հաճախ հանգեցնում են առօրյա գործունեության դժվարությունների, աշխատունակության նվազման և կյանքի որակի անկման: Նմանատիպ կլինիկական պատկեր բնորոշ է նաև սառած ուսի համախտանիշին (ուսահողի ադեզիվ պատիճաբորբ, բուրսիտներ) կամ պոտական մանժետի ջլախտին/ջլաբորբին, միայն այն տարբերությամբ, որ ՊՆՊՈՒՎ-ը հստակ ժամանակային կապի մեջ է գտնվում նույն կողմի ուսի շրջանում կատարված պատվաստման հետ: Այսինքն, ՊՆՊՈՒՎ-ը, որպես այդպիսին, պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին կլինիկական միավոր, այլ ավելի շուտ՝ բժշկահրավական եզրույթ [15,17]:

Երբեմն, երբ լինում է նյարդի ներգրավում, հիվանդը կարող է գանգատվել նաև վերջույթի թուլությունից, թմրածությունից և պարէսթեզիաներից [1,7,9]:

ՊՆՊՈՒՎ-ի ախտորոշման համար հաճախ բավարար է լինում միայն հավաքել մանրազնին անամնեզ և կատարել հիվանդի մանրակրկիտ կլինիկական քննություն՝ առանց որևէ լաբորատոր կամ ճառագայթաբանական հետազոտության [15]:

Տարբերակիչ ախտորոշման շրջանակներում պետք է նախ գնահատել վարակի համակարգային նշանները, ինչպիսիք են ջերմությունը, հոդացավը, այտուցը և կարմրությունը: Արյան ընդհանուր քննության որոշ ոչ սպեցիֆիկ ցուցանիշներ, ինչպիսիք են լեյկոցիտոզը, C-ռեակտիվ սպիտակուցի բարձր մակարդակը, էրիթրոցիտների նստեցման արագության բարձրացումը և այլն, կարող են վկայել բորբոքային պրոցեսին վարակիչ բաղադրիչի գումարման մասին: Երբեմն հարկ է լինում կատարել ռենտգենագրություն՝ օմալգիայի այլ պատճառները բացառելու

համար, ինչպես նաև փափուկ հյուսվածքների լրացուցիչ ճառագայթաբանական հետազոտություն, մասնավորապես՝ ՈւՁԿ կամ մագնիսառեզոնանսային շերտագրություն (ՄՌՇ)՝ պարկաբորբի (բուրսիտ), ջլախտի (տենդինոպաթիա) կամ ջլաբորբի (տենդինիտ) առկայությունը գնահատելու համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ սուբակրոմիալ բուրսիտի հայտնաբերման առումով ՈւՁԿ-ն ունի 0.79-0.81 զգայունություն և 0.94-0.98 սպեցիֆիկություն [18]: Սակայն վերջինս բավականին «օպերատոր-կախյալ» հետազոտություն է և կարող է աղավաղել բուրսիտի իրական պատկերը քննության ժամանակ տվիչով ուղղակի ճնշման պատճառով: ՄՌՇ-ն ունի ավելի բարձր զգայունություն ուսի պաթոլոգիա հայտնաբերելու առումով [19]:

Տարբերակիչ ախտորոշմանը կարող են օգնել նաև լիդոկայինի ախտորոշիչ ներարկումները [15]:

### ԲՈՒԺՈՒՄ, ԵԼՔԵՐ

Հաղորդված դեպքերի սակավության և էթիոպաթոգենեզի սահմանափակ ընկալման պատճառով ՊՆՊՈՒՎ-ի բուժման միանշանակ սխեմա դեռևս գոյություն չունի [15]: Բուժման հիմքում գլխավորապես ընկած են ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցները, ֆիզիոկամ կինեզիթերապիան և կորտիկոստերոիդների ներարկումները [20]: Եզակի դեպքերում լինում է վիրահատության կարիք՝ հիմքում ընկած ուսահողային պաթոլոգիան բուժելու համար: Այնուհանդերձ, առկա հրապարակումների արդյունքները ցույց են տալիս, որ նշված բուժական միջոցառումները ոչ միշտ են հանգեցնում լիակատար ապաքինման: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ դրանք բոլորն էլ հիմնված են եղել վերականգնման կարգավիճակի ոչ թե օբյեկտիվ, այլ հիվանդների սուբյեկտիվ ինքնագնահատման վրա, որոնցից շատերը փոխհատուցման պահանջներ են ներկայացրած եղել այն հաստատություններին, որտեղ կատարվել է պատվաստումը [15]:

### ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Այսպիսով, ՊՆՊՈՒՎ-ը հիմնականում ոչ պատշաճ կամ անփույթ ներարկման տեխնիկայի հետևանք է՝ «յաթրոգեն վնասվածք»: Ուստի դրա զարգացման ռիսկը գրեթե բոլոր տեսակի պատվաստանյութերի դեպքում նույնն է: Պարագապես, բնական է, որ ՊՆՊՈՒՎ համեմատաբար ավելի շատ է հանդիպում այն պատվաստումներից հետո, որոնք ավելի հաճախ են կիրառվում: Օրինակ, ԱՄՆ-ում 2010-2017թթ. կատարված պատվաստումներից հետո զարգացած

ՊՆՊՈՎ-ների ավելի քան 80%-ը բաժին է ընկել գրիպի դեմ իմունիզացիային [20]: Որևէ հետազոտություն դեռևս չի ապացուցել, որ որևէ պատվաստանյութի ներարկում ավելի հաճախ է հանգեցնում ՊՆՊՈՎ-ի, քան մյուսներինը [15]:

Վերջերս ԿՈՎԻԴ-19-ի համավարակի ֆոնին ի հայտ եկած «պատվաստաբուժը» նույնպես բացառություն չէ. ակնկալվում է, որ պատվաստումների այս մեծ ծավալը, մինչույն մարդկանց կրկնակի ու եռակի պատվաստումները նույնպես կարող են ուղեկցվել ՊՆՊՈՎ-ներով [21], քանի որ իմունիզացիա կատարողները (հիմնականում միջին բուժանձնակազմը) երբեմն ստիպված են լինում պատվաստանյութ ներարկել օրական հարյուրավոր մարդկանց, ինչը կարող է բարձրացնել ներարկման տեխնիկայի խախտման վտանգը:

Տասնամյակների ընթացքում ապացուցվել է, որ դելտայաձև մկանի ներարկումը պատվաստանյութի միջմկանային ներմուծման թերևս ամենահարմար ու ամենաապահով տարբերակն է [22]: ՊՆՊՈՎ-ի կանխարգելման համար հույժ կարևոր է, որպեսզի իմունիզացիա կատարողները հստակ տիրապետեն և պահպանեն պատվաստանյութի ներարկման անվտանգ տեխնիկայի հետևյալ կանոնները (Նկ. 1-3).

**1. Ներարկման կողմը՝ ձախ, թե՛ աջ.**


► Քանի որ ՊՆՊՈՎ-ի զարգացման պատճառներն ու մեխանիզմները դեռևս լիովին պարզաբանված չեն և ոչ ոք ապահովագրված չէ «իդիոպաթիկ» ՊՆՊՈՎ-ից, ապա որպեսզի դրա հնարավոր զարգացման դեպքում կյանքի որակը հնարավորինս քիչ տուժի, խորհուրդ է տրվում ներարկումը կատարել ոչ դոմինանտ կողմում, այսինքն՝ աջիկների մոտ ձախ, իսկ ձախիկների մոտ աջ դելտայաձև մկանում:

► Եթե ոչ դոմինանտ կողմում ներարկումն անհնար է հակացուցումների (բորբոքում, ինֆեկցիա և այլն), դելտայաձև մկանի ատրոֆիայի կամ պարզապես վերջույթի բացակայության պատճառով, ապա ներարկումը ստիպված պետք է կատարել դոմինանտ կողմի դելտայաձև մկանում:


**2. Ապահով ներարկման տեղամասը.**

► Վերին սահմանը. ուսելունից 2-3 մատ ներքև: Թույլ է տալիս խուսափել ուսի հողապարկի մեջ ներարկումից (Նկ. 1): Հաստ մատների դեպքում՝ 2, իսկ միջին հաստության կամ բարակ մատների դեպքում՝ 3 մատ [7]:

► Ստորին սահմանը. համընկնում է անութափոսի ծալքի հետ. այդ մակարդակին գտնվում



**Նկար 1.** Պատվաստանյութը պետք է ներարկել ուսելունից 2-3 մատ ներքև՝ ճուսպապարկից (կապույտ) հեռու:



**Նկար 2.** Դելտայաձև մկանի ներարկման ապահով տեղամասի սահմանները (կանաչ եռանկյուն):

է դելտայաձև մկանի ջիլ՝ բազկոսկրին կպման տեղը [7]:

► Վարակազերծում. ներարկումից առաջ ներարկման տեղամասը պետք է վարակազերծել 70% իզոպրոպիլ սպիրտով կամ նմանատիպ վարակազերծիչով [23]:

► Սխալ տեղամաս. եթե ասեղը ներմուծվել է ապահով ներարկման տեղամասից դուրս (Նկ. 2, կարմիրով նշված տեղամասը), ապա այն պետք է հանել, փոխարինել նորով և կրկին ներմուծել ճիշտ տեղում՝ կրկին վարակազերծելուց հետո: Եթե կասկած կա, որ ներարկումը կատարվել է ուսի հոդապարկի կամ սուբակրոմիալ բուրսայի մեջ, ապա պատվաստվողին պետք է իրազեկել, որ հնարավոր է զարգանա ՊՆՊՈՒՎ. առաջիկա 48 ժամերի ընթացքում ի հայտ եկող ուժգնացող ցավի և ուսի շարժումների սահմանափակման դեպքում պետք է դիմել օրթոպեդի կամ ձեռքի վիրաբույժի [5]:

**3. Ասեղը.**

► **Երկարությունը.** նախ կարևոր է ընտրել ճիշտ երկարության ասեղ, ինչը պետք է կատարել՝ պատվաստվողի սեռից, մարմնի կազմվածքից և քաշից կախված [24]: Քաշից և սեռից կախված՝ Իմունիզացիայի կանադական ուղե-

Тип А – бифуркация ВВ; тип В – трифуркация ВВ (отсутствует общий ствол правой ВВ); тип С – раздельное экстрапаренхиматозное отхождение задней и передней ветвей правой ВВ; тип D – раздельное отхождение задней и передней ветвей ВВ, передняя ветвь отходит интрапаренхиматозно; тип E – раздельное отхождение ветвей V и VIII сегментов (отсутствует общий ствол передней ветви правой ВВ).



торной вирусной инфекции почувствовал боли в области живота. УЗИ органов брюшной полости выявило объемное образование печени и спленомегалию.

По данным КТ органов брюшной полости – объемное образование в правой доле печени, признаки внутрипеченочного масс-эффекта (фиброламеллярная гепатоцеллюлярная карцинома под вопросом), без метастатических поражений и признаков лимфаденопатии. За счет сдавления опухолевым образованием определялось высокое стояние диафрагмы (Рис. 2). В венозной фазе была выявлена анатомическая особенность в воротной системе: воротная вена разделилась на латеральную ветвь, которая кровоснабжает 6 и 7 сегменты, далее ствол продолжался и делился на парамедианную, кровоснабжающую 5 и 8 сегменты, и левую ветви воротной вены (Рис. 3; тип С на Рис. 1).

Вследствие ухудшения состояния спустя месяц, пациент обратился в медицинский центр “Измирлян”, был госпитализирован с целью проведения планового оперативного вмешательства в виде правосторонней гемигепатэктомии (ПГГЭ).

На момент поступления по данным лабораторных исследований: HBsAg 8144 COI (при положительном результате, начиная с 1 COI), альфа-фетопротеин (АФП) >10.000 МЕ/мл (при норме ≤ 5,8) и высоком показателе С-реактивного белка (16,89 при норме <5).

На основании имеющихся данных был поставлен диагноз: хронический гепатит В, объемное образование правой доли печени.



В связи с необходимостью проведения обширной резекции печени и наличием хронического гепатита В, важным является оценка состояния оставшейся паренхимы левой доли печени. С этой целью было проведено гистологическое исследование неизменной паренхимы. Заключение: хронический гепатит, METAVIR A2 (умеренная активность), F1 (портальный и перипортальный фиброз).

Была проведена ПГГЭ в плановом порядке. В первую очередь по принятой методологии были обработаны воротные структуры: пересечена и лигирована правая ветвь собственной печеночной артерии, проведена мобилизация холедоха с последующей холецистэктомией, после чего визуализировалась воротная вена (Рис. 4).


С учетом анатомических особенностей, был пересечен правый печеночный проток, что позволило сместить холедох медиально, после чего можно было визуализировать все ветви воротной вены (Рис. 5).




**Рис. 2.** Венозная фаза КТ пациента, коронарная проекция. Высокое стояние диафрагмы за счет давления опухолевым образованием.



**Рис. 3.** Венозная фаза КТ пациента, аксиальная проекция. Верхней стрелкой обозначена левая ветвь воротной вены. Нижней обозначена латеральная (задненижняя) ветвь, отходящая отдельно до бифуркации основного ствола. Визуализируется также спленомегалия.



**Рис. 4.** Интраоперационно. Ствол воротной вены, культя пересеченной правой ветви собственной печеночной артерии, пересеченный пузырный проток и холедох на держалке. Ветвь, которая идет поперек ствола в левую долю, и часть ветви, идущей в правую (А). Но при ревизии было обнаружено, что до этого участка от ствола отделялась еще одна ветвь, идущая в правую долю (В).



**Рис. 5.** Интраоперационно. На держалке – холедох, видны ствол воротной вены, лигированные латеральная лигатура взята пинцетом) и парамедианная ветви. На этом фоне видна линия демаркации (темная паренхима правой доли и светлая – левой).

Только после обработки воротных структур была мобилизована правая доля печени. Проведена плоскостная резекция диафрагмы в связи с большим объемом опухолевого поражения печени и вращением в купол диафрагмы. Было выявлено вращение в правый надпочечник, в связи с чем проведена плоскостная резекция надпочечника. После этого была проведена ПГГЭ по линии демаркации (Рис. 6 и 7). Объем кровопотери: 500 мл.

Послеоперационный период осложнился реактивным плевритом. Последнее осложнение встречается в 15-25% случаев после гемигепатэктомии. Генез реактивного плеврита неотъемлемо связан с травматизацией диафрагмы при выполнении операции на печени [13].


Была проведена плевральная пункция справа с удалением 500 мл прозрачной жидкости без запаха, назначены диуретики и антибактериальная терапия. В ходе динамического исследования повторного накопления жидкости в плевральной полости не наблюдалось.

На 17-е сутки пациент был выписан в удовлетворительном состоянии.


## ОБСУЖДЕНИЕ

Наиболее значительным фактором риска для ГЦР является цирроз (около 80% случаев).

Основными причинами развития цирроза (при которых происходит повреждение печени), а следовательно, и ГЦР являются в том числе и вирусные гепатиты В и С [11]. Результаты более десятка проспективных когортных исследований показали, что хроническая инфицированность HBV в 100 и более раз повышает риск развития ГЦР. Причинная связь между HCV и раком печени была подтверждена выявлением РНК HCV в опухолевых клетках. [4]. Но надо учитывать, что не все пациенты с циррозом подвержены равному риску развития ГЦР, и ГЦР не всегда встречается у пациентов с циррозом. Помимо цирроза, с повышенным риском связаны и другие факторы, которые включают в себя принадлежность к мужскому полу, пожилой возраст, постоянное повышение уровня аланинаминотрансферазы, повышение уровня АФП и постепенное нарушение функции печени. Менее 10% случаев ГЦР развивается в здоровой ткани печени [12]. Учитывая этиологические факторы, сформировался определенный контингент скрининга (УЗИ, определение уровня АФП), в том числе больные гепатитом В, С, D, циррозом печени и т.д.



**Рис. 6.** Удаленный материал. 30x20 см.



**Рис. 7.** Оставшаяся левая доля печени.

Кроме скрининга, основными моментами являются: определение объема опухоли и ее локализации, объем оставшейся части и ее функциональное состояние, отношение опухоли к сосудам, выявление увеличенных лимфатических узлов и отдаленных метастазов, а также верификация опухоли (например, пункционная биопсия).

Для осуществления концепции диагностики ГЦР проводят УЗИ, КТ с внутривенным контрастированием, морфологическую верификацию биоптата из опухоли.

Лечение ГЦР должно быть комбинированным: сочетаются химиотерапия и хирургические методы, среди которых выделяют три основных метода: резекция печени, трансплантация печени (при циррозе и нарушении функции печени) и локальные методы (радиочастотная абляция, химиоабляция [этанолом или раствором уксус-

ной кислоты], которые применяются преимущественно при размерах опухоли не более 4 см, криодеструкция). У каждого из данных методов имеются свои показания и противопоказания, и выбор проводится с учетом ряда факторов, которые определяются на этапе диагностики, в том числе учитываются размер и локализация опухоли, состояние пациента.

На сегодняшний день основным является анатомическая резекция, выполнение которой стало возможным в связи с развитием методологии современной гепатохирургии, что уменьшило риск развития осложнений и объем кровопотерь. При этом принципиальным является соблюдение этапов проведения обширных резекций печени: обработка воротных структур, лигирование структур удаляемой части, в глиссоновых воротах, мобилизация и лигирование печеночной вены с соответствующей стороны [14].

## ЛИТЕРАТУРА

1. Bray F, Ferlay J, Soerjomataram I et al. Global cancer statistics 2018: GLOBOCAN estimates of incidence and mortality worldwide for 36 cancers in 185 countries. *CA Cancer J Clin.* 2018;68:394-424
2. Forner A, Reig M, Bruix J. Hepatocellular carcinoma. *Lancet.* 2018;391:1301-1314
3. GLOBOCAN 2020 Cancer Fact Sheet. [www.globocan.iarc.fr](http://www.globocan.iarc.fr) (accessed Jan 2021)
4. Рак печени или печеночноклеточный (гепатоцеллюлярный) рак печени (C22) Доступно на: <http://www.oncology.ru/specialist/epidemiology/malignant/C22/>
5. Онкология. Под ред. Чиссова ВИ, Дарьяловой СЛ. Москва: ГЭОТАР-Медиа, 2007. 560 с.
6. Cheng YF, Huang TL, Lee TY et al. Variation of the intrahepatic portal vein: angiographic demonstration and application in living-related hepatic transplantation. *Transplant Proc.* 1996;28:1667-1668
7. Gallego C, Velasco M, Marcuello P et al. Congenital and acquired anomalies of the portal venous system. *RadioGraphics.* 2002;22:141-159
8. Nakamura T, Tanaka K, Kiuchi T et al. Anatomical variations and surgical strategies in right lobe living donor liver transplantation: lessons from 120 cases. *Transplantation.* 2002;73:1896-1903
9. Lee SG, Hwang S, Kim KH et al. Approach to anatomic variations of the graft portal vein in right lobe living-donor liver transplantation. *Transplantation.* 2003;75(3S):S28-32

10. Галян ТН. Ангиоархитектоника и билиарная анатомия печени родственного донора по данным мульти-спиральной компьютерной томографии и магнитно-резонансной томографии: Автореф. дис. канд. мед. наук. М 2010.

11. Marrero JA, Kulik LM, Sirlin CB et al: Diagnosis, staging and management of hepatocellular carcinoma: 2018 practice guidance by the AASLD. Hepatology. 2018;68(2):723-750

12. Bruix J, Reig M, Sherman M: Evidence-based diagnosis, staging, and treatment of patients with hepatocellular carcinoma. Gastroenterology. 2016;50(4):835-853

13. Дзидзава ИИ, Слободяник АВ, Ионцев ВИ. Осложнения после обширных резекций печени. Вестник Российской Военно-Медицинской Академии. 2015;3(51):262-263

14. Лекции по гепатопанкреатобилиарной хирургии. Под ред. Гальперина ЭИ, Дюжевой ТГ. Москва: Видар-М, 2011:260-269

**Լյարդաբջջային քաղցկեղի վիրահատական բուժումը դռներակի հազվադեպ արատով հիվանդի մոտ**

Խաչատուր Վ. Բադալյան, Անժելա Ա. Տոնոյան

Իզմիրլյան բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան  
 Վիրաբուժության և նորարարական վիրաբուժական տեխնոլոգիաների ամբիոն, ակադ. Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

Լյարդաբջջային քաղցկեղը լյարդի ամենատարածված չարորակ ուռուցքն է (դեպքերի մոտ 90%),

որը ծագում է հեպատոցիտներից: Այն բնութագրվում է ագրեսիվ ընթացքով, բարդությունների և մահացության բարձր մակարդակով: Կանխատեսումը ծայրաստիճան անբարենպաստ է՝ 5-ամյա ապրելիությունը չի գերազանցում 30%-ը: Հոդվածում նկարագրվում է 64-ամյա տղամարդու լյարդաբջջային քաղցկեղի բուժման կլինիկական դեպք՝ դռներակի հազվագյուտ արատով: Կատարվել է աջակողմյան հեմիհեպատէկտոմիա, խոլեցիստէկտոմիա, ստոծանու գմբեթի հարթահատում և աջ մակերիկամի հարթահատում:

***Հիմնաբառեր.** լյարդաբջջային քաղցկեղ, դռներակ, զարգացման արատ, հեմիհեպատէկտոմիա*

**Surgical treatment of hepatocellular carcinoma in a patient with a rare malformation of the portal vein**

Khachatur V. Badalyan, Anzhela A. Tonoyan

Izmirlyan Medical Center, Yerevan, Armenia  
 Department of Surgery and Modern Surgical Technologies, Avdalbekyan National Institute of Health, Yerevan, Armenia

**ABSTRACT**

Hepatocellular carcinoma is the most common (about 90% of cases) malignant tumor of the liver originating

from hepatocytes. It has an aggressive course with a high level of complications and deaths. The prognosis is extremely unfavorable: 5-year survival does not exceed 30%. The article describes a clinical case of treatment of hepatocellular cancer in a 64-year-old man with a rare malformation of the portal vein. Performed right-sided hemihepatectomy, cholecystectomy, planar resection of the dome of the diaphragm and planar resection of the right adrenal gland.

***Keywords:** hepatocellular carcinoma, portal vein, developmental anomaly, hemihepatectomy*

ՀԱՅՈՑ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

**ARCHIVES OF ARMENIAN MEDICINE  
АРХИВЫ АРМЯНСКОЙ МЕДИЦИНЫ**

Մեր խիկարը յուսահատած,  
 Եթէ զուք ինձ հաւատաք,  
 (Զի հեղինակ միշտ այդ կերպով  
 Կընկնի սաստիկ կրքքի տակ).....

Արթիժովեցաւ  
 Կրքակ զարձաւ,  
 Չը մըտածած  
 Արձուկ յանկարծ ....

Կաղամարին մէջ խառնեց  
 Թանաքին հետ մըկընդեղ,  
 Այդ օրէն վերջ թունաւոր  
 Գըրչով կգրէր ամեն հեղ,  
 Եւ ինչպէս որ կը կարծէր,  
 Եկան չար ընթերցողներ,  
 Թէպէտ կրծել ըսկըսան,  
 Բայց ամենքն ևս ճաթեցան ....  
 Շատ բարի է, կասէք զուք,  
 Գըրօղն ունի իրաւունք,  
 Բայց ես այդպէս չեմ գատեր,  
 Այդ խօսքին ձեռք չեմ զըներ,  
 Չըկայ գիրք մի վատ կամ աղեկ,  
 Ար կըրծըված շինի երբէք,  
 Սորա համար հարկ չէ կարծեմ  
 Ար գըրիչ թոյնով թաթխեն ....

ԱՌԱՔԵՆԻ ԿԱԼՈՒՆԳԵԱՆ:

Սէֆէրուշ:

### ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ:

#### Վարակիչ Իդէալիստ Հիւանդութիւններ:

I

Բն-ի-ն շ-գիթ թոյնը սաստիկ վարակիչ է, և ոչ մի հասակ վարակվելուց  
 ազատ չէ, յայտնի է որ արգանդի մէջ անգամ մանուկը կարող է վարակ-  
 վել իւր մօլից, Գիտողութիւններից երևում է որ դէպի ծաղկի թոյն ունե-  
 ցած տրամադրութիւնը երբեմն թուլանում է և կամ բոլորովին անհետա-  
 նում, որովհետև կան անհատներ, որոնք թէպէտ գտնվում են շարունակա-  
 բար այդ թոյնի ազդեցութեան տակ, բայց չեն վարակվում, Մի անգամ  
 ծաղկով հիւանդացողը կորցնում է իւր տրամադրութիւնը կրկին հիւանդա-  
 նալու կամ բոլորովին և կամ բաւական երկար ժամանակ, Ծաղկը փո-

խաղրվումէ հիւանդներից առողջներին ուղղակի կամ անուղղակի միջոցներով: Հաստատ յայտնի է, որ ծաղկի վարակիչ կաչողական յատկութիւնը նորա բշտկի մէջն է բովանդակվում, նորա ներգործութիւնը աւելի խիստ է, երբ այդ բշտկի առաջուց պարզ բովանդակութիւնը սկսվումէ պղտորվել թէպէտ և չորացած բշտիկներն անգամ վարակիչ զօրութիւն ունին, որոնք հին ժամանակ ծաղիկ պատուաստելու համար էին գործ դրվում: Գեռ յայտնի չէ խուխի, մէզի և թուքի վարակիչ յատկութիւնները. վարակվել կարելի է ոչ թէ միայն հիւանդից, այլ և նորան շրջապատող իրերից, թէպէտև թղչնի վարակիչ զօրութիւնը պակասումէ: քանի որ հեռանումէ հիւանդից, Ծաղկին տրամադրված անհատները աւելի շուտով են վարակվում: որքան նոքա երկար միջոց հիւանդի մօտ են լինում, որքան հիւանդի բնակարանը փոքր է և որքան բնակարանում հիւանդների թիւը շատ է, հիւանդը կարող է վարակիչ նիւթ առաջացնել դեռ ևս հիւանդութեան յատկական նշանն չերևցած միջոցին, օրինակ ծաղկով հիւանդանալու այն դէպքերը, երբ հիւանդները դժուարանում են բացատրել վարակման աղբիւրը: Ծաղկի թղչնը բաւական երկարատև է, եթէ արտաքին ազդեցութիւններից պատասպարված է, իսկ եթէ մթնոլորտ օդի ազդեցութեան տակ է, նա իւր վարակիչ ընդունակութիւնը կորցնումէ, երևի շատ անօրացած լինելու պատճառով: Վարակիչ թղչնը բնաջինջ է լինում սաստիկ տաքութենից, քլօրի, ծծումբի, եօդի գոլորշուց և կամ ալկօօլից (սպիրտ). դորա համար հարկաւոր է այդ թղչնամաքրիչ (дезинфицирующую) նիւթերով երկար ներգործել վարակված առարկաների վերայ: Ծաղկի վարակումն հաւանական է որ շնչառութեան ճանապարհով է կատարվում, և յիրաւի որ այդ եղանակով վարակումն կարող է հեշտ պատահել, որ և հաստատումէ հին Զինացիների ծաղիկ պատուաստելու սովորութիւնը. նոքա ծաղկի բշտկի կեղերը քթի մէջ էին խցում, վարակումը շուտով յայտնվում էր:

Ծաղիկը կարող է երևիլ կամ թեթև և կամ սաստիկ աւերիչ ճարակմունքով. շատերը հաստատում են որ իրր ծաղկի համաճարակմունք կրկնվում են նշանաւոր ժամանակներում (12—15 տարի) կանոնաւոր մատեմատիկական ճշգրութեամբ: Այսպէս թէ այնպէս, պէտք է ասել, որ ծաղկի համաճարակմունքը պարբերաբար են երևում, որ իրաւի նշանաւոր կապ ունի այն հանգամանքի հետ, թէ կան արդեօք դէպի վարակում տրամադրված անհատներ թէ ոչ: Ծաղկի համաճարակման յատկութիւնները շատ զանազան են լինում: Ախճակազրական տեղեկութիւնները համոզում են, որ ծաղկահատութեան գործ դրելուց սկսած, համաճարակման երկիւղը բաւական թուլացաւ: Թէպէտ պէտք է յիշել, որ այժմ ևս պատահում են մեծ համաճարակմունք, ինչպէս 1871—1872 թ. համաճարակումն էր: Սև ծաղիկը (variola haemorrhagica) մի փոքր բացառութեամբ, միշտ մահաոխիթ հետեւանքներ ունի: Մանուկները ծաղկից աւելի են մեռնում քան թէ հասակաւորները: Կուրջման ասումէ, որ տասն տարեկանից ծաղկով հիւանդացող մանուկներից կէսը մեռնում են:

II

Այն փաստը, որ մարդ մի անգամ մի որևիցէ վարակիչ կույտողական ցա-  
 ւով հիւանդացած լինելով շատ թեք քիչ ազատվում է մի և նոյն հիւանդու-  
 թեամբ կրկին վարակվելուց, պատճառ է դարձել ծաղկահատութեան գոր-  
 ծադրութեան: Հին լուսաւորված ազգերին յայտնի էր, որ մարդը միան-  
 գամ ծաղիկ հանելուց յետոյ, կորցնում է կամ նուազում է նորա ընդու-  
 նակութիւնը, կրկին ծաղկով վարակվելու: Ինչպէս և իցէ երկրորդ անգամ  
 պատահած վարակումն անցնում է բաւական թեթեւ կերպով, սորանից  
 երևում է որ մարդի կազմուածքը փոքր առ փոքր թոյնին ընտելանում է և  
 կորցնում է կամ նուազում է նորա տրամադրութիւնը դէպի վարակիչ թոյնը:

Այդ պատճառով շատ բնական է, որ մարդիկ դեռ հին ժամանակներում  
 աշխատում էին արհեստական ձևով բնական ծաղիկը պատուաստել (ИНКУ-  
 БАЦИЯ) ցանկանալով թեթեւ ծաղիկ ունենալ և զորանով պահպանել մարդին  
 առաջիկայ սպասելի վարակումից և ծանր հիւանդութիւնից: Զինա-  
 ցիներ սովորութիւն ունէին իւրեանց մանուկներին ծաղկի թոյնով լց-  
 ված շապիկներ հագցնել և կամ քթի մէջ ծաղկի բշտիկ կեղևները խցել:  
 Արեւելեան Հնդկաստանում բնական ծաղիկ պատուաստելն սովորութիւն  
 էր դարձել և բրամինների ձեռքի տակ էր և գործ էր անում իբրև մի  
 կրօնական արարողութիւն և զորա պատճառով շատ տարածված էր: Այդ  
 տեսակ ծաղկահատութիւնը կովկասեան երկիրներում ևս ընդունված էր,  
 համարեայ Ասիայի բոլոր հին ազգերը միմեանցից անկախ այդ միջոցով  
 աշխատում էին ազատվել ծաղկի սաստիկ համաճարակումից:

Մինչև XVIII դարը, բնական ծաղկի պատուաստելու տեղեկութիւնները Եվ-  
 րօպայում սակաւ են, միայն յայտնի է, որ 1720 թ. Եվրօպայի հասարա-  
 կութեան ուշադրութիւնը դարձրեց զորա վերայ լէդի Մօնտեզիւ, Կոստանդ-  
 նուպօլսի անգլիական զեսպանի ամուսինը: Նա տեսնելով բնական ծաղկի  
 պատուաստելու բարենպատակ ազդեցութիւնը, պատուաստել տուեց նորան  
 իւր զաւակներին. այն ժամանակից սկսած բնական ծաղկի պատուաստելն  
 (ինչիւնչիւն) տարածվեցաւ Անգլիայ, Շվեդիայ և Լիթվանիայ, ուր հա-  
 մարվում էր միակ ծաղկի դէմ պաշտպանողական միջոց, Ի հարկէ այդ  
 տեսակ միջոցը բաւական երկիւղալի էր և նորա առողջապահական ազատիչ  
 ներգործութիւնը կասկածելի էր, որովհետև պատուաստվողներից շատերը  
 մեռնում էին, և բացի զորանից այդ եղանակով արհեստական կերպով  
 ծաղկի թոյնը ահագին քանակութեամբ տարածվում էր. պէտք է ենթադրել  
 համաճայն դօկտօր Բօնի, որ միայն ծաղկից առաջացած անսահման զար-  
 հուրանքը կարողանում էր մարդկութիւնը ստիպել այդ տեսակ երկիւղալի  
 միջոցն յօժարակամ գործ դնել:

Թէպէտ առողջապահական կողմից այդ միջոցը հերքվում է, բայց ինչ  
 և իցէ բնական ծաղիկ պատուաստելն ևս իւր օգտաւէտ հետեանքներն  
 ունեցաւ, նա պարզ ցոյց տուեց, որ կարելի է երկիւղալի հիւանդութեան



առաջն առնել արհեստական կերպով թեթեւ հիւանդութիւն պատճառելով, այս փաստը նպաստեց հասարակութեանը ընդունելու և ճիշդ հասկանալու պատահմամբ գտած առողջապահական ծաղկահատման եղանակը, որի մասին այժմ կ'իտասնէք:

Ծաղկահատման խնդիրը մեծ քայլ առաւ անցեալ 90 թուականներին, երբ հաստատուեալ յայտնվեցաւ, որ կովերի ծծերի վերայ առաջացած ծաղիկը (вакцина), մարդիկներին պարտուաստված լինելով, պաշտպանում է բնական ծաղիկի վարակումից: Սորանից առաջ ևս յայտնի էր, որ պատահմամբ կովի ծաղկով վարակված մարդիկ բնական ծաղկով այլ ևս չէին հիւանդանում, մինչև անգամ սաստիկ համաճարակներէ ժամանակն ևս:

Առաջին անգամ զիտմամբ կովի ծաղիկ պատուաստեց Անգլիայում կալուածատէր Բէնիամին Զէստի, որն առաջուց ինքն իր վերայ փորձելով կովի ծաղիկ պահպանողական զորութիւնը, պատուաստեց 1794 թ. կովի ծաղիկը իւր ամուսնուն և երկու զաւակներին: Նորանից յետոյ բժիշկ Էդուարդ Զէները հաստատեց, որ մարդկային մարմնի վերայ կովի ծաղիկ \*) պատուաստելուց յետ առաջացած բշտիկներ պարունակումեն թոյն (гуманизированная лимфа), որ մի և նոյն պաշտպանողական յատկութիւն ունի, ինչպէս և նախկին կովի ծաղիկ բշտի բաղադրութիւնը: Բայց շնայելով զորան, քանի մի տէրութիւններ կասկածում էին կովի ծաղիկ պատուաստման մասին: Մինչև 1840 թ. Անգլիայում մարդի ծաղիկ պատուաստումն բաւական գործ էր զրվում: 1838 թ. աւերիչ ծաղիկ համաճարակումից յետ, Անգլիայի կառավարութիւնը համոզվելով մարդկային ծաղիկ պատուաստման վատ հետեւանքների մասին, արգելեց բոլորովին: Շվեդիայն Անգլիայից առաջ օրէնքով հրամայեց մարդկային ծաղիկ պատուաստող բժիշկներին զրկել բժշկական իրաւունքներից: Միւս եվրոպական տէրութիւնները արդէն սկսել էին կովի ծաղիկ պատուաստելն, բայց պէտքէ ասել, որ ամենայն տեղ, բացի Շվեդիայից, ծաղկահատութիւնը թոյլ էր տարածվում և վերջին 1870—1872 թ. ծաղիկ մեծ համաճարակումն ստիպեց մի քանի տէրութիւններին աւելի եռանդ գործել և հասարակութիւնը համոզել ծաղկահատութիւնը պարտաւորված կատարելու, այժմ ևս պարտաւորեալ ծաղկահատութեան դէմ հակառակորդներ չատ կան \*\*), ուստի հարկաւոր ենք համարում համառօտ բացատրել այդ հակառակորդների ծաղկահատման մասին արած ընդդիմաբանութիւնը:

Ծաղկահատութեան հակառակորդները պնդում են թէ նորա առողջապահական և նախապաշտպանական յատկութիւնները ց'որք են, նորա սուսմեն, թէև ծաղկահատութեան պաշտպանները աշխատում են վիճակա-

(\*) Վերջին հետազոտութիւններին նայելով պէտքէ ենթադրել, որ կովի ծաղիկը իբրև առանձին հիւանդութիւն դոյութիւն չունի եւ թէ մինչև այժմ ընդունված կովի ծաղիկը առաջանում է մարդկային ծաղիկը կովի վերայ պատուաստելուց յետ:

(\*\*) Այս մասին երկու բժիշկների մէջ վէճ բացվեցաւ մեր տղայտիկ գրականութեան մէջ անգամ, (Հայկական Աշխարհ, 1877, № 5, 6, 7, 8, 9):

զրական թուերով հաստատել ծաղկահատութեան օգուտը, բայց կարելի չէ այդ թուերի վերայ մեզ յոյս դնել, որովհետև ոչ մի տեղ և ոչ մի անգամ վիճակագրական տեղեկութիւնները հարկաւոր ճշդութեամբ և զգուշութեամբ չէին հաւարվում. հակառակորդների կարծիքով, հիմնվելով այժմեան վիճակագրութեան վերայ, կարելի է առանց այլևայլութեան հաստատել, որ բոլորովին զանազանութիւններ չկան չպատուաստվողների կամ պատուաստվողների հիւանդանալու յաճախութեան մէջ. նորա նմանապէս ենթադրում են որ իրր թէ պատուաստվածների և չպատուաստվածների հիւանդութեան ընթացքի մէջ ևս զանազանութիւն չկայ և իրր թէ մեռնողների թիւը բոլորովին չէ սակաւացել քանի որ ծաղկահատութիւնը ընդունված է:

Եւ երկրորդ ծաղկահատութեան հակառակորդները աշխատում են համոզել, որ ծաղկահատութիւնը շատ անգամ մանուկների առողջութեան վերայ է ներգործում, նորա պնդում են որ յաջողակ ծաղիկ պատուաստելուց առաջացած մանուկի ընդհանուր հիւանդութիւնը անմասն չէ նորա ղեռահաս հասակին և կարող է ծանր խանգարումն պատճառել մանուկի կազմուածքին. նմանապէս նորա ասում են, որ մանուկներից շատերը հիւանդանում են և մեռնում են կարմիր քամի (рожа) կոչված տկարութենից, որ առաջանում է պատուաստված տեղից և վերջապէս որ ոչ մի մանուկ պաշտպանված չէ ծաղկահատութեան միջոցին վարակվելու դէմ միւս ամենավարակիչ սիֆիլիս հիւանդութեամբ, որի թոյնը պատահմամբ կարող է լինել պատուաստելու ծաղիկ աւշիկի (пимафа) մէջ:

Յիրաւի որ եթէ վերոյիշված ապացոյցները ճշդութեամբ ընդունէինք, պէտք է վերջին մահաոխիթ վճիռ արտասանենք ծաղկահատութեան մասին. բայց ափսոս որ այդ կարգին պատկանող հակառակորդները մինչև ցայժմ չեն կարողանում հերքել բաւականին ապացոյցներով. դորա պատճառով և այդ երկու հակառակորդ կողմերը չյաջողեց համաձայնեցնել. Յիրաւի որ մինչև վերջին ժամանակ ծաղկով հիւանդանալուն կամ մեռնելուն և կամ ծաղկահատութեան վերաբերեալ տեղեկութիւնները, մի քանի բացառութեամբ, անպիտան են և ոչ որ չէ կարող դոցանից օգուտ քաղել, ծաղկահատութեան նախապաշտպանողական գորութիւնը հաստատելու համար. Այդ վիճակագրական տեղեկութիւնների գլխաւոր թերութիւնը այն է որ թէ պատուաստված և թէ չպատուաստված հիւանդացողների և մեռնողների թուի մէջ ուշադրութիւն չէ դարձրած թէ որքան պատուաստվածներ և որքան չպատուաստվածներ կան մի որ ևիցէ հասարակութեան մէջ. Ի հարկէ ծաղկահատութեան օգուտը այն ժամանակ միայն կարելի կլինի հաստատել, երբ կերևի որ համաճարակման ժամանակ հիւանդութեան կամ մահի դէպքերը չպատուաստվածների մէջ աւելի են քան թէ պատուաստվածների մէջ:

Վիճակագրութիւնը մի պակասութիւն ևս ունի, որ ուշադրութեան արժանի է երկու հակառակորդներին ևս. դրանք բառի միտքը ոչ մի

տեղ իսկապես չէ որոշվում, սովորաբար այդ բաժնին վերաբերում են ամենքին, ում որ մի ժամանակ պատուաստված է եղել ծաղիկը, առանց ուշադրութիւն դարձնելու թէ արդեօք ծաղկահատութիւնը յաջող էր կատարված թէ ոչ և թէ քանի միջոց է անցել պատուաստելու օրից: Այդ բառի միտքը անորոշ և շփոթ լինելով բնական է, որ վիճակագրական ցուցակների մէջ դրանք կարգում գտնվում են այնպիսիները, որոնք կարող են անյաջող պատուաստված լինել և կամ այնքան երկար միջոց է անցել ծաղկահատութեան օրից, որ նորա պաշտպանողական զօրութիւնը անցել է և ուրեմն այդ հանգամանքներում պէտք է որ դոքա չպատուաստվածների կարգում համարվին: Եթէ մենք նայենք այդ կողմից այժմեան վիճակագրական տեղեկութիւններին, յիրաւի կհամոզվինք, որ թէ ճիշդ դիտողութիւններ և թէ կանոնաւոր հաւաքված տեղեկութիւններ շատ քիչ են գտնվում: Աւրեմն և բժիշկների թերահաւատ յարաբերութիւնը զէպի այդ տեղեկութիւնների նշանակութիւնը բացատրելի է:

Ինչ և իցէ, չնայելով այդ անպէտք տեղեկութիւններին, կարելի է դոքա մէջ գտնել և այնպիսիներ, որոնք արդարեւ կարողանում են հաստատել ծաղկահատութեան նախապաշտպանողական զօրութիւնը: Օրինակ մտարեբնէք մի ամբողջ դարում հաւաքված Շվեցիայի վիճակագրական տեղեկութիւնները, որոնք ցոյց են տալիս, որ XIX դարում շարունակաբար ծաղկից մեռնողների թիւը սակաւացել է, ծաղկահատութեան տարածման համեմատ: Բացի դորանից գտնվում են և այս վերջին ծաղկի համաճարակմանը վերաբերեալ մի քանի վիճակագրական գրաւոր աշխատութիւններ, որոնք անհերքելի հաստատում են, որ չպատուաստվածների մէջ թէ հիւանդացողներ (ծաղկով) թէ մեռնողներ աւելի էին պատահում քան թէ պատուաստվածների մէջ: Պէտք է ասել որ այդ տեղեկութիւնները կանոնաւոր են հաւաքված, հիմնաւոր են և կատարեալ և պէտքէ ընդունել որ զօգանից առաջացած եզրակացութիւնները ևս պիտի որ ճշմարտութեան մօտ լինին:

Այդ հետազօտութիւններից մին է զօկտօր Ֆլինցերի արած 1870—1871 թ. ծաղկի համաճարակման նկարագրութիւնը Խէմնից քաղաքում (Սակսօնիայում) և երկրորդ զօկտօր Միլլերի աշխատութիւնը մի և նոյն համաճարակման մասին Վալդհէյմ քաղաքում:

Խէմնից քաղաքում զօկտօր Ֆլինցերի հետազօտութեամբ երևեցաւ, որ այդ քաղաքի 64253 բնակիչներից գտնվում էին:

- 53891 պատուաստվածներ (յաջող պատուաստ) 83% (տոկոս)
- (կոտորակներն այս թուերից բաց թողված են)
- 5712 չպատուաստվածներ . . . . . 8%
- 4652 բնական ծաղիկ ունեցողներ . . . . . 7%
- Համաճարակման ժամանակ վարակվեցան 3596 հոգի—5% քաղաքի բնակիչներից, նոցա մէջ գտնվում էին.
- 953 պատուաստվածներ . . . . . 1% բոլոր պատուաստվածներից.
- 2643 չպատուաստվածներ . . . . . 57% բոլոր չպատուաստվածներից.

3596 վարակվածներից մեռան 249=6% որոնք են 221 մանուկներ, 14 տարեկանից ցած և միայն 28 չափահասներ: Մեռած մանուկները բոլորովին պատուաստված չէին, իսկ չափահաս մեռնողներից 21 չէին պատուաստված: Արեմն պատուաստվածներից մեռան 2%, իսկ չպատուաստվածներից 97%, ուրիշ բառերով 953 պատուաստված հիւանդներից մեռան 0, 73% (մին տղոսի 1%) և 2643 չպատուաստված հիւանդներից 9%:

Գոկտօր Միւլէրի աշխատութենից երևումէ, որ Վալդհէյմ քաղաքի 5055 բնակիչներից 4713=93% պատուաստված էին (և բնական ծաղիկ հանողներ) և 342=6% չէին պատուաստված (անյաջող պատուաստված): 1872 թ. յունվար ամսից մինչև 1873 թ. ապրիլը վարակվեցան 124=2% պատուաստվածներից (կամ բնական ծաղիկ ունեցողներից), և 126=36% չպատուաստվածներից (կամ անյաջող պատուաստվածներից): Մեռան ծաղիկից 66 մարդ, չպատուաստվածներից 43%, իսկ պատուաստվածներից 8%:

Այս տեսակ ճիշդ տեղեկութիւններն ափսոս որ քիչ են բժշկական գրականութեան մէջ և դժբա հաստատումեն, որ համաճարակման ժամանակ չպատուաստվածներն աւելի են վարակվում և մեռնում քան թէ պատուաստվածները:

Ծաղկահատման վատ ազդեցութիւնները մանուկների ընդհանուր առողջութեան վերայ չունին ոչ բաւական հաստատողութիւն և ոչ ևս ընդհանուր նշանակութիւն, այդ մասին չունինք ընդարձակ գիտողութիւններ և պէտքէ ասել որ ծաղկահատման հակառակորդների այդ յանդիմանութիւնը կարող է հիմնվել միայն իւրաքանչիւր բժշկի անձնական փորձի վերայ:

Յիրաւի որ պատուաստվելուց յետ երբեմն պատահումէ հարկէր տանուանեալ հիւանդութիւնը, բայց շատ սակաւ, այդ հիւանդութիւնը լինում է սովորաբար կրթարանական տներում (воспитательные дома) և իսկ մասնաւոր բնակարաններում և կամ ընդհանրապէս հասարակական ծաղկահատութեան մէջ շատ քիչ է պատահում:

Ծաղկահատութեան միջոցով սիֆիլիս ախտի տարածումն արդարև պատահումէ անհատի (որից վերցնումեն ծաղկապատուաստման աւելիք — լիմֆայ) բժշկական ամենազգոյշ քննութիւնը ոչ մի ժամանակ սխալմունքից չէ պահպանում, որովհետև ծածուկ սիֆիլիսի դէպքերը (այսինքն սիֆիլիս հիւանդութեան երեղյթների ժամանակաւոր բացակայութիւնը) բաւական յաճախ են պատահում մարդիկների մէջ, և պէտքէ ասել որ այդ տեսակ սխալմունքը վատ հետեանքներ են առաջացնում թէ պատուաստվածի և թէ բժշկի համար, թէպէտ բժիշկն յանցանք չունի: Այդ հանգամանքը աւելի վնասակար հետեանքներ պիտի ունենայ այն երկիրներում և քաղաքներում, ուր սիֆիլիսը բաւականաչափ տարածված է և շուտով կարող է հերքել ծաղկահատութեան օգուտը և պակասացնել հասարակութիւն դէպի ծաղկահատութիւն ունեցած համարումն:

Այժմ աշխատում են մարդկային աւելի (гуманизированная лимфа) գոր-


ծածուկները սահմանափակել և դորա փոխարեն գործ դնել կենդանական աւշիկը (որ ստացվում է մարդկային ծաղիկ պատուաստված կովերից և հորթներից)։ Գծբաղդաբար մինչև այժմ այդ տեսակ փորձառութիւններ յաջողութեամբ չեն վերջացել․ փորձը ցոյց տուեց որ հորթի աւշիկը շատ անգամ լաւ չէ պատուաստվում (20—30%), իսկ մարդկային աւշիկը ընդհակառակն մեծ մասամբ յաջող է պատուաստվում։ Ուրեմն թէպէտ մի կողմից կենդանական աւշիկը պատուաստելով, սիֆիլիսով վարակվելը սահմանափակվում է, բայց միւս կողմից կենդանական աւշիկի զօրութիւնը պակաս լինելով շատ անգամ նա անյաջող է պատուաստվում․ պէտքէ յուսալ, որ հետզհետէ կենդանական աւշիկի ստանալու եղանակը պիտի որ կատարելագործվի և անյաջող պատուաստման դէպքերը պիտի պակասին։ Բացի դորանից հարկաւոր է միշտ պատուաստել ուղղակի հորթից վերցրած աւշիկը, որովհետեւ մինչև այժմ կենդանական աւշիկի զօրութիւնը պահպանելու համար դեռ ևս եղանակներ չեն գտել։

Ուրեմն պէտքէ ընդունել որ մարդկային կամ կենդանական ծաղիկ աւշիկ պատուաստելը բաւական պահպանումէ մարդին ապագայում երկիւղալի բնական ծաղկով վարակվելուց, թէև այդ նախապաշտպանական զօրութիւնը մի քանի տարուց յետոյ (10—15 տարի) նուազում է և պէտքէ այդ միջոցից յետ կրկին պատուաստել։ Մարդից վերցրած լիմֆան ունի աւելի պաշտպանողական ոյժ քան թէ հորթի լիմֆան։ Բայց նա մասամբ երկիւղալի է, պատճառ որ սիֆիլիսական թոյնը լիմֆայի հետ կարող է լինել ուրեմն և մարդը կարող է սիֆիլիսով վարակվել։

Այդ հանգամանքների վերայ պէտքէ ուշք դարձնել, երբ կամենում են որ և իցէ հասարակութեան մէջ ծաղկահատութիւնը տարածել պարտաւորապէս։

Եթէ տերութիւնը զիտաւորվումէ պարտաւորական անել ծաղկահատութիւնը, նա միւսնոյն ժամանակ բարոյապէս պարտաւորվումէ պահպանել հասարակութիւնը այն վատ հետեանքներից, որոնք կարող են երկիւղաւոր հատութեան միջոցին։ Միւսնոյն ժամանակ նա պէտք է բարոյապէս համոզէ հասարակութիւնը, որ պարտաւորեալ ծաղկահատութիւնը օգտաւէտ է\*), իբրև նախապաշտպանական միջոց ծաղկի դէմ, պէտքէ կազմակերպէ ճիշդ ծաղկական վիճակագրութիւն, որով կարելի կլինէր քննել ծաղկահատման յառաջադիմութիւնը։ Իսկապէս այդ տեսակ աշխատութիւնները պէտքէ պարտաւորական ծաղկահատութիւնը ժողովրդի մէջ մտցնելուց առաջ պատրաստել բայց ստիպողական պահանջները, ուրիշ բառերով բարոյական հարկաւորութիւնը շատ անգամ հարկադրում է տերութիւններին այն միջոցներ գործ դնել, որոնց հիմունքը դեռ սակաւ են բացատրված տեսակաբար։ Եւ պէտքէ

(\*) Երրորդ բժշկական միջոցաւային ժողովը 1873 թ. վէճնայում. 162 ձայներից 156 բաղմութեամբ վճռեց հարկաւոր համարել ծաղկահատութիւնը եւ առաջարկել նորա ստիպողական գործադրութիւնը։



**Վարակիչ պատվաստվող հիվանդություններ**

Գրիգոր Տեր-Գրիգորյան  
Արարատ, 1879, ԺԲ տարի, Զ, 231-239, Էջմիածին

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

Ծաղկի տեսակների և դրանց դեմ պատվաստումներին նվիրված բժշկագիտական ուղղվածության հոդված, լույս տեսած 1879թ. Էջմիածնում հրատարակվող «Արարատ» ամսագրում:

**Vaccinable Infectious Diseases**

Grigori Ter-Grigoryan  
Ararat, 1879, Vol 12, issue 6, 231-239, Etchmiadzin

**ABSTRACT**

This medical article was dedicated to smallpox and other infectious vaccinable diseases and their vaccination, which was published in 1879 in the Etchmiadzin city-based "Ararat" monthly journal.

**Вакцинируемые инфекционные заболевания**

Григор Тер-Григорян  
Арагат, 1879, Том 12, номер 6, 231-239, Эчмиадзин

**АБСТРАКТ**

Статья медицинской направленности о разных видах оспы и их прививаемости, опубликованная в 1879г в журнале "Арагат", г. Эчмиадзин.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**GUIDE FOR AUTHORS  
ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ**

**ՀՈՂԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ**

- ▶ Խմբագրական (Editorial)
- ▶ Օրիգինալ հոդված (Original research)
- ▶ Կարճ հոդված (Short communication)
- ▶ Գրականության ակնարկ (Review)
- ▶ Կլինիկական դեպք (Clinical case)
- ▶ Նամակ խմբագրին (Letter to the Editor)
- ▶ Մեկնաբանություն (Commentary)
- ▶ Հատուկ հոդված (Special article)
- ▶ Ուղեցույց (Guideline)

Հոդվածի տեսակը պետք է նշել հոդվածն ուղարկելիս՝ էլ. նամակի Subject դաշտում առաջին հեղինակի ազգանվան հետ մեկտեղ (օրինակ, Petoyan – Review):

**ՊԱՀԱՆՋՆԵՐ ՀՈՂԱԾՆԵՐԻՆ**

**Ընդհանուր տեխնիկական պահանջներ**

- ▶ Բուն հոդվածի տեքստային մասը տրամադրել էլեկտրոնային ձևով (էլ. փոստով կամ կրիչով), «doc» կամ «docx» ձևաչափով (Word ֆայլ):
- ▶ Նյութի էջի չափը՝ A4:
- ▶ Դաշտերը (margins)՝ 1.5 սմ բոլոր կողմերից:
- ▶ Էջերին չօգտագործել page number և header:

- ▶ Էջատակերի հղումները (footnote) կատարել ճշգրիտ, ծրագրային, այլ ոչ թե ձեռքով:
- ▶ Տեքստային դաշտը՝ մեկ սյունակով:
- ▶ Նյութի էջերն առանց ֆոնային նկարների և գունավորման (background picture, background color):
- ▶ Տառաչափը՝ 12 pt:
- ▶ Տառատեսակը՝ ցանկացած Unicode տառատեսակ (օր.՝ Tahoma, Sylfaen, GHEA Grapalat կամ GHEA Mariam):
- ▶ «Ձախ», «աջ» և «կենտրոն» հավասարումները կատարել align-ի միջոցով (align left, align right, align center, full justify), այլ ոչ թե բացատով (space) կամ tab-ով:
- ▶ Հնարավորության դեպքում խուսափել text box-երի և word-art-ի կիրառումից:
- ▶ Չօգտագործել macros-ներ:
- ▶ Աղյուսակները, գրաֆիկաները, գծագրերը, նկարները և բանաձևերը տրամադրել նաև առանձին ֆայլ(եր)ով.
- ▶ նկարների դեպքում՝ ամեն պատկերն առանձին՝ jpg, jpeg, png, tiff, tif, psd, eps, ai կամ pdf ձևաչափով՝ հնարավորինս ամենաբարձր որակով:

**ՀՈՂԱԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**

**Հանդեսի բոլոր հոդվածների վերաբերյալ**

- ▶ Վերնագիր
- ▶ Հեղինակներ
- ▶ Հաստատություններ
- ▶ Կոնտակտային հեղինակ և կոնտակտային տվյալները
- ▶ Ամփոփագիր՝ գրված հոդվածի հիմնական լեզվով
- ▶ Հիմնաբառեր (առավելագույնը՝ վեց)
- ▶ Հոդվածի հիմնական մաս
- ▶ Շնորհակալության խոսք (Acknowledgements, եթե հեղինակները ցանկանում են)
- ▶ Շահերի բախման մասին հայտարարություն
- ▶ Հետազոտության ֆինանսավորման աղբյուր, եթե առկա է
- ▶ Հղումներ (շարել ըստ հոդվածում հղվելու հերթականության)
- ▶ Ամփոփագրեր և հիմնաբառեր մյուս երկու լեզուներով
- ▶ Աղյուսակ(ներ)
- ▶ Նկարներ՝ պետք է ուղարկվեն առանձին,

հատուկ պահանջներին համապատասխան (տես նախորդ բաժնում):

**Առաջին էջի բաղադրություն և պահանջներ**

- ▶ Վերնագիր. առավելագույնը 25 բառ, ամբողջապես մեծատառով, խուսափել հապավումներից և հատուկ նշաններից
- ▶ Հեղինակներ. լրիվ ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, օր.՝ Պետոյան Վ.Ս.
- ▶ Հաստատություններ՝ համարակալած հեղինակի անունից հետո ցուցիչով. մեկ հեղինակը կարող է նշել մի քանի հաստատություն, սակայն առաջին հերթին նշվում է այն, որն ամենակարևորն է հոդվածի նյութի հետ կապված (օր.՝ Պետոյան Վ.Ս.1)
- ▶ Կոնտակտային-հեղինակ, որի անունից և հաստատության համարից հետո կդրվի \* հաստատությունների ցանկից հետո կնշվի այդ հեղինակի լրիվ անունը և կոնտակտային տվյալները (հեռախոս, էլ.-փոստ և այլն) (օր.՝ Պետոյան Վ.Ս.1,\*)
- ▶ Հոդվածի բառաքանակ՝ բուն տեքստի (ներածությունից մինչև եզրակացություն) բառերի քանակը
- ▶ Աղյուսակների քանակ
- ▶ Նկարների քանակ

**ՀՂՈՒՄՆԵՐ**

Հղումները կազմելիս կիրառվում է համարակալում տեքստում ըստ հանդիպելիության՝ քառակուսի փակագծերում՝ կետադրության նշաններից առաջ՝ հետևյալ օրինակներով. եթե մեկն է՝ [3], եթե երկուսն են՝ [3,6] կամ [3,4], իսկ եթե մի քանիսն են իրար հետևից՝ [3-6], խառը տարբերակ՝ [4,7-9]:

Հղումները համապատասխանեցնել AMA ոճին (AMA citation style):

**Հոդված պարբերականից**

- ▶ Մեկից մինչև վեց հեղինակներ.

Khachatryan SG, Ghahramanyan L, Tavadyan Z, Yeghiazaryan N, Attarian HP. Sleep-related movement disorders in a population of patients with epilepsy: prevalence and impact of restless legs syndrome and sleep bruxism. J Clin Sleep Med. 2020;16(3):409-414.

Abrahamyan DO, Gazarian A, Braillon PM. Estimation of stature and length of limb segments in children and adolescents from whole-body dual-energy X-ray absorptiometry scans. Pediatr Radiol. 2008;38(3):311-315.

**Յոթ և ավելի հեղինակներ.**

Topuridze M, Berg CJ, Dekanosidze A, et al. Smokers' and Nonsmokers' Receptivity to Smoke-Free Policies and



Pro- and Anti-Policy Messaging in Armenia and Georgia. Int J Environ Res Public Health. 2020;17(15):5527. Published 2020 Jul 30.

**Ամբողջական գրքի հղում**

Aminoff MJ, Greenberg DA, Simon RP. Clinical Neurology, Sixth Edition. United States of America: McGraw-Hill Companies;2005:1-401.

**Գրքի գլխի հղում**

Verrier RL, Mittelmon MA, Autonomic Activity and Circulatory function During sleep. In Kryger MH, Roth T, Dement W. Principles and Practice of Sleep Medicine, Fourth Edition. United States of America:Elsevier Inc; 2005:1161-1170

**Ինտերնետային էջի հղում**

Գլխավոր էջ. Առողջապահության ազգային ինստիտուտ. <http://nih.am/am>. Դիտված է սեպտեմբերի 21, 2021.

**ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

Ստորև բերված են հոդվածներին վերաբերող հատուկ պահանջներն ըստ հոդվածի տեսակի:

**Օրիգինալ հոդվածներ (Original research)**

Օրիգինալ հոդվածներում ներկայացվում են գիտահետազոտական աշխատանքի արդյունքները, համապատասխան վիճակագրական վերլուծության ներկայացմամբ:

Բացի ընդհանուր կառուցվածքային բաժիններից, հոդվածի հիմնական մասը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից.

- ▶ Ներածություն
- ▶ Մեթոդներ
- ▶ Արդյունքներ
- ▶ Քննարկում
- ▶ Եզրակացություն

Ամփոփագրի ծավալ՝ 300 բառ (3 լեզուներով):

Հոդվածի ծավալ՝ 3000-5000 բառ (չի ներառում առաջին էջի պարունակությունը, ամփոփագրերը, հղումները և աղյուսակները):

Հղումների առավելագույն քանակ՝ 40 (պետք է ձգտել հնարավորինս թարմ և գրախոսվող գրականության հղում կատարել):

Աղյուսակներ և/կամ նկարներ՝ ընդհանուր առավելագույնը 6:

**Կարճ հոդվածներ (Short communication)**

Կարճ հոդվածներում ներկայացվում են գիտահետազոտական աշխատանքի արդյունքները, համապատասխան վիճակագրական վերլուծության ներկայացմամբ, երբ դրանք փոքրածավալ են:

Բացի ընդհանուր կառուցվածքային բաժիններից, հոդվածի հիմնական մասը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից:

- ▶ Ներածություն
- ▶ Մեթոդներ
- ▶ Արդյունքներ
- ▶ Քննարկում
- ▶ Եզրակացություն

Ամփոփագրի ծավալ՝ 200 բառ (3 լեզուներով):

Հոդվածի ծավալ՝ 1500-3000 բառ (չի ներառում առաջին էջի պարունակությունը, ամփոփագրերը, հղումները և աղյուսակները):

Հղումների առավելագույն քանակ՝ 20 (պետք է ձգտել հնարավորինս թարմ և գրախոսվող գրականության հղում կատարել):

Աղյուսակներ և/կամ նկարներ՝ ընդհանուր առավելագույնը 3:

**Գրականության ակնարկ (Review)**

Գրականության ակնարկը որևէ թեմայի շուրջ առկա տվյալների բարեխիղճ և ապացուցողական ամփոփումն է: Ամփոփագրի ծավալ՝ 300 բառ (3 լեզուներով):

Հոդվածի ծավալ՝ 3000-8000 բառ (չի ներառում առաջին էջի պարունակությունը, ամփոփագրերը, հղումները և աղյուսակները):

Հղումների առավելագույն քանակ՝ 80:

Աղյուսակներ և/կամ նկարներ՝ ընդհանուր առավելագույնը 6:

**Կլինիկական դեպք (Clinical case)**

Ամփոփագրի ծավալ՝ 200 բառ (3 լեզուներով)

Հոդվածի ծավալ՝ 1500 բառ (չի ներառում առաջին էջի պարունակությունը, ամփոփագրերը, հղումները և աղյուսակները):

Հղումների առավելագույն քանակ՝ 15 (պետք է ձգտել հնարավորինս թարմ և գրախոսվող գրականության հղում կատարել):

Աղյուսակներ և/կամ նկարներ՝ ընդհանուր առավելագույնը 3:

Կլինիկական դեպքերի համար ի լրումն վերը նշված պահանջներին հարկավոր է կցել պացիենտի համաձայնության լրացված և ստորագրված ձևը (ներբեռնեք այստեղ):

**Նամակ խմբագրին (Letter to the Editor)**

Հոդվածի ծավալ՝ 750 բառ (չի ներառում առաջին էջի պարունակությունը, ամփոփագրերը, հղումները և աղյուսակները):

Հղումների առավելագույն քանակ՝ 5 (պետք է ձգտել հնարավորինս թարմ և գրախոսվող գրականության հղում կատարել):

Աղյուսակներ և/կամ նկարներ՝ ընդհանուր առավելագույնը 1:

**Ըստ գլխավոր խմբագիրների հայեցողության, հնարավոր են որոշակի շեղումներ վերը նշված պահանջներից, ինչպես նաև այլ ձևաչափի հոդվածների հրապարակում:**

**Խնդրում ենք հնարավորինս հետևել և համապատասխանեցնել ուղարկվող հոդվածները առաջարկվող ձևաչափին խմբագրական գործընթացը առավել արագացնելու և հեշտացնելու նպատակով: Սիրով սպասում ենք ձեր հոդվածներին:**

*ԱԲՀՀ խմբագրություն*

## ARTICLE TYPES

- ▶ Editorial
- ▶ Original research
- ▶ Short communication
- ▶ Review
- ▶ Clinical case
- ▶ Letter to the Editor
- ▶ Commentary
- ▶ Special article
- ▶ Guideline

The type of article from the above list should be indicated in the "Subject" field of an e-mail along with the surname of the first author (for example, Petoyan – Literature Review). Send your article to the following email: info@ahms.am.

## REQUIREMENTS FOR ARTICLES

### General technical requirements:

- ▶ Page size: A4.
- ▶ Margins: 1.5 cm on all sides.

## GENERAL STRUCTURE OF ARTICLES

For all the articles of the journal, the Word file should have the following structure:

- ▶ Title
- ▶ Authors
- ▶ Institutions
- ▶ Corresponding author's full name, phone number and e-mail address
- ▶ Abstract written in the main language of the article
- ▶ Keywords (maximum 6)
- ▶ The main body of the article
- ▶ Acknowledgments (optional)
- ▶ Conflict of interest statement
- ▶ Source of research funding if available
- ▶ References (sort by appearing order in the article)
- ▶ Titles, Authors' names, Institutions, Abstracts and Keywords in two other languages (the AJHMS will assist in translations if unfamiliar to authors)
- ▶ Tables
- ▶ Figure legends

## REFERENCES

While forming the reference list, the sorting is made by their appearing order in the article, in square brackets, before the punctuation marks, with the following examples: if one [3], if two: [3,6] or [3,4], and if several following each other: [3-6], mixed version: [4,7-9].

Match the links to the American Medical Association's (AMA) citation style.

### Article from the journal:

- ▶ One to six authors

Khachatryan SG, Ghahramanyan L, Tavadyan Z, Yeghiazaryan N, Attarian HP. Sleep-related movement disorders in a population of patients with epilepsy: prevalence and impact of restless legs syndrome and sleep bruxism. *J Clin Sleep Med*. 2020;16(3):409-414.

Abrahamyan DO, Gazarian A, Brailon PM. Estimation of stature and length of limb segments in children and adolescents from whole-body dual-energy X-ray absorptiometry scans. *Pediatr Radiol*. 2008;38(3):311-315.

- ▶ Do not use page numbers and headers on pages.
- ▶ Use footnotes accurately with software, not manually.
- ▶ Text field with one column.
- ▶ Pages without background images and coloring (background picture, background color).
  - ▶ Font size: 11 pt.
  - ▶ Font type: any Unicode font (for example, Tahoma, Sylfaen, GHEA Grapalat or GHEA Mariam).
  - ▶ When aligning "left", "right", "justified" or "center", use alignment function (align left, align right, align center, full justify) and not space or tab.
  - ▶ Avoid using text boxes and word-art if possible.
  - ▶ Do not use macros.
  - ▶ Provide tables, graphs, charts, images and formulas with separate files.
  - ▶ In the case of figures, provide every image separately: in jpg, jpeg, png, tiff, tif, psd, eps, ai or in pdf format, with the highest possible quality.
  - ▶ Send the Word file (DOC or DOCX format) of the article text and all other files (tables, images, etc.) by e-mail to info@ahms.am.

- ▶ Figures must be sent separately in accordance with special requirements (see above).

### Composition of THE TITLE PAGE and requirements:

- ▶ Title: maximum 25 words, avoid abbreviations and special characters
- ▶ Authors: full surname and initials, e.g. Petoyan V.S.
- ▶ Institutions: numbered in index after the name of the author. One author can mention several institutions, but firstly mentioned is the one most relevant to the article's material (for example, Petoyan V.S.1,2)
  - ▶ Corresponding author should be mentioned in the author list with an asterisk [\*] after the institution number(s) (e.g. Petoyan V.S.,1,\* or Gichunts K.O.1,2,\*).
- ▶ Corresponding author's full name and contact information (phone, e-mail, etc.) should be placed after the affiliations
  - ▶ Word count: the number of words in the original text (from introduction to conclusion)
  - ▶ Number of tables
  - ▶ Number of figures

- ▶ Seven and more authors

Topuridze M, Berg CJ, Dekanosidze A, et al. Smokers' and nonsmokers' receptivity to smoke-free policies and pro- and anti-policy messaging in Armenia and Georgia. *Int J Environ Res Public Health*. 2020;17(15):5527.

- ▶ Full book reference

Aminoff MJ, Greenberg DA, Simon RP. *Clinical Neurology, Sixth Edition*. United States of America: McGraw-Hill Companies;2005:1-401.

- ▶ Book chapter reference

Verrier RL, Mittelmon MA. Autonomic Activity and Circulatory function During sleep. In Kryger MH, Roth T, Dement W. *Principles and Practice of Sleep Medicine, Fourth Edition*. United States of America: Elsevier Inc; 2005:1161-1170

- ▶ Internet page reference

Main page. National Institute of Health. <http://nih.am/am>. Accessed September 21, 2021.

## SPECIAL REQUIREMENTS ACCORDING TO ARTICLE TYPES

### Original research

The original studies present the results of the research work by showing the relevant statistical analysis.

In addition to the general structural sections, the main part of the article consists of the following subsections:

- Introduction
- Methods
- Results
- Discussion
- Conclusion

Abstract word limit: 300 words (in 3 languages).

Article word limit: 3000-5000 words (does not include title page content, abstracts, references and tables).

The maximum number of references: 40 (use up-to-date and peer-reviewed literature).

The maximum number of Tables and/or Figures: 6.

### Short communication

The short communication is reserved for the results of the research work, presenting the relevant statistical analysis, when they are small in size.

In addition to the general structural sections from above the main part of the article consists of the following subsections:

- Introduction
- Methods
- Results
- Discussion
- Conclusion

Abstract word limit: 200 words (in 3 languages).

Article word limit: 1500-3000 words (does not include title page content, abstracts, references and tables).

The maximum number of references: 20 (use up-to-date and peer-reviewed literature).

The maximum number of Tables and/or Figures: 3.

### Review

An overview of the literature is a conscientious and evidence-based summary of the data on a given topic.

Abstract word limit: 300 words (in 3 languages).

Article word limit: 3000-8000 words (does not include title page content, abstracts, references and tables).

The maximum number of references - 80.

The maximum number of Tables and/or Figures: 6.

### Clinical case (Case report)

Abstract word limit: 200 words (in 3 languages)

Article word limit: 1500 words (does not include title page content, abstracts, references and tables).

The maximum number of references: 15 (use up-to-date and peer-reviewed literature).

The maximum number of Tables and/or Figures: 3.

In addition to the above-mentioned requirements, clinical cases must be accompanied by a completed and signed consent form from the patient.

### Letter to the Editor

Article word limit: 750 words (does not include title page content, references and tables). No abstract needed,

Maximum number of references: 5 (use up-to-date and peer-reviewed literature).

Maximum number of Tables and/or Figures: 1.

**At the discretion of the Co-Editors-in-Chief, some deviations from the abovementioned requirements are possible, as well as the publication of other types of articles.**

*Please, follow and bring the submitted articles as close as possible to the suggested format in order to speed up the editing process. We look forward to your articles.*

*AJHMS Editorial Office*

**Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես  
#1/ հատոր II / 2022 թ.**

**Armenian Journal of Health & Medical Sciences  
#1/ Volume II / 2022**

**Армянский журнал здравоохранения и медицинских наук  
#1 / Том II / 2022**

Տպաքանակը՝ 200 օրինակ  
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60X84, 1/8, ծավալը՝ 9.5 տպ. մամուլ / 76 էջ  
Տպագրված է «PrintArm» տպագրատանը Գիտական պարբերական ժողովածու:  
Հրատարակված է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կողմից:  
Երևան, Կոմիտաս 49/4, հեռ.՝ +374 10 23 71 34, +374 93 45 55 77

[www.nih.am](http://www.nih.am), [www.ahms.am](http://www.ahms.am); [info@nih.am](mailto:info@nih.am), [info@ahms.am](mailto:info@ahms.am)  
 [armnih](https://www.facebook.com/armnih),  [niharmenia](https://twitter.com/niharmenia),  [nih-armenia](https://www.linkedin.com/company/nih-armenia),  [nihArmenia](https://www.telegram.com/nihArmenia).





Առողջապահության  
և բժշկագիտության  
հայկական հանդես

Armenian Journal of  
Health & Medical Sciences

Армянский журнал  
здравоохранения  
и медицинских наук